



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

151.7

            
π - 94

14 JUL 2009

Ա. ԲՈՒԳՈՒՂԵԱՆ.

ԱՌՈՂՋ ՈՒ ՆԻԱՆԴ ԵՐԵԽԱՅԻ ՈԳԻՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ  
ԻՒՂԱԲԵՐ  
ՍԵՐՈՒԵԱՆ - ԻՆՁԻԿԵԱՆԻ  
23 ՅՈՒՆԻՈՒՐԻ 1929 ԹՈՒԻ

Ս. ՊԵՏՏՐՈՒՄԻ

«ՊԵՏՏՐՈՒՄԻ ԱՐԿԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ  
ԼԵՆԻՆՎՈՎ ՓՈՂՈՑ, Տ. 4.

1902

151.7  
F-94

ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՆՆԵՏԵԻԱԼ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻ

1. Անը և հասարակութիւնը:
2. Ի՞նչ է պոռնիկութիւնը:
3. Սիֆիլիս և ամուսնութիւն:
4. Սով և ոճրագործութիւն:
5. Ի՞նչ է իրաւունքը և բարոյական:
6. Արկրագործը, թէ բանուորը:
7. Հիւանդութիւնը և բակտերիաներ:
8. Մտամորսի և արհեստի հիւանդու:
9. Բնութեան ոլորտը, ինչպէս բժիշկ:
10. Առեւտրային բնագործութիւնը:
11. Անտանային շրջանները:
12. Սէր և խանդ:
13. Անտախապաշտութիւն և դիտութիւն:

Ի հրոյ հարստեացի պարտքեւանքս

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ.

151.7

բ-94

ԱՌՈՂՋ ՈՒ ՀԻՒԱՆԴ Վ46

ԵՐԵՒԱՅԻ ՈԳԻՆ



Ս. ՊԵՏԵՐԱՌՈՒՐԳ

«ՊՈՒՂԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ

1902

3901

Дозволено цензурою. С.-Петербургъ, 3 Мая 1902 года.

37064-62

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ 4.



«МАТЕР И ДИТЕ»



«Մի հասարակութիւն՝ որ ճանաչում է հայրենիքի առաջ ունեցած պարտքը, բոլոր եռանդով պէտք է աշխատի լուսաւորութեան արգելաօրէիներն ոչնչացնելու:

Պէտք է հասկանալ՝ որ ժողովրդի մտաւորական զարգացման միջոցով ապագայ ժողովրդի հարցն է իսկապէս լուծուում:

Մեր ժամանակներում գիտութիւնն ու կրթութիւնը միակ հիմնական գէնքերն են, որոնցով գոյութեան կռուի մէջ կարելի է մաքառել:

Ներքին ոյժը, ազգային հարստութեան, պետութեան հաստատութեան միակ հիմքը՝ մտաւորական զարգացումն է:

Հետզհետէ մօտենում է այն ժամանակը, երբ խաւար ու տգէտ ազգերը երկրաւոր խնձոյքում տեղի պիտի տան լուսաւորուած մրցակիցներին:

Գիտնալով այս ճշմարտութիւնը՝ պէտք է համերաշխ լինել—մէկը ամենքի, ամենքը մէկի համար. պէտք է կանոնաւոր դաստիարակութիւն. պէտք է դպրոցների, հասարակային լուսատու հաստատութիւնների թիւը բազմացնել»:

## ԱՌԱՋԱԲԱՆ

Շատ կարևոր և միանգամայն հետաքրքրական է իմանալ թե ի՞նչպէս է զարգանում մանուկի հոգեկան կեանքը:

Այսպիսի մի գիտութիւն անհրաժեշտ է երեխայ հոգեպէս ու ֆիզիքապէս լաւ դաստիարակելու համար:

Սեր դաստիարակութիւնը այն ժամանակ միայն ընտիր ու կանոնաւոր կլինի, երբ զիտենք դաստիարակողի բնութիւնը:

Իւ այն ազգերը, որոնց մէջ դաստիարակութիւնը կանոնաւոր հիմունքների վրայ է հաստատուած, նրանք միայն լուսաւոր ապագայ ունին:

Ինութիւնը մարդ է ստեղծում, դաստիարակութիւնը կատարելագործում է:

Երանգականութեան ուսումը դրականապէս ապացուցանում է, թէ ծնողների ֆիզիքական ու հոգեկան յատկութիւնները որդիներին են անցնում: սա մի բնական օրէնք է:

Նորածնի հոգու մէջ արդէն իսկ գտնւում են ապագայ ընդունակութիւնների բոլոր սաղմերը՝ թէև անորոշաբար:

Դաստիարակութեան գործն է՝ այդ ընդունակութիւնները զարգացնել, խեղդել կամ նրանց այս ու այն ուղղութիւնը տալ:

Դաստիարակութեան նպատակը պիտի լինի՝ մանուկներին հասարակութեան օգտակար անդամ դարձնել:

Եւ այն անհատն է հասարակութեան օգտակար, որ ընդունակ է կեանքի հետ կոուելու ոչ միայն իւր անհատական գոյութիւնը, այլ և իւր մերձաւորի—ուրիշներէ կեանքը պահպանելու համար. այդպիսիի համար կեանքը քուն ու թմրութիւն չէ, այլ պատերազմ՝ մեծարժէք, իդէալական շահերի համար:

Վիտի՛ր, հետզհետէ գրի անցրուք ուրիշայի կեանքը, և ապագային մեծապէս կվարձատրուիս:

Եշխատենք նմանել հռչակաւոր Վարուինին, Տէնին, Պրէեբրին, Ֆլեկսիդին, Սիկորսկուն, Վլէոոիին:

Թող այս գրքային էլ ընդունուի իբրև փոքրիկ նուէր նորատի կանանց:

ԲՆ. Ա. Բարոզիան:

Ս. Պետերբուրգ, 1902 թ.

»Մանուկների մէջ է ապագայ մարդկութիւնը»:

Ա.

Պ՛ու, նորատի մայր, քնած մանուկիդ օրօրոցի մօտ նստած ժամանակդ ու այդ ջերմ շնչոդ կենդանի արարածն դիտելիս՝ հարցրե՞լ ես ինքդ քեզ արդեօք, թէ որտեղից է այս կեանքը, ինչու է ապրում, և ինչ է նշանակում այս ամենը:

Մանուկը զարթնում է. դիտում ես նրա լայնարաց աչքերը, որոնք զարմացմամբ ու կարծես զաղտնի երկիւղով նայում են իրեն համար նոր աշխարհին, բայց դարձեալ կեանքի զաղտնիքը քեզ համար անհասկանալի զաղտնիք է քնում, գոյութեան առեղծուածը՝ դարձեալ անլուծանելի առեղծուած:

Սակայն մի բան կայ, որի նկատմամբ դու բնաւ չես կասկածում. քո մէջ կայ մի վե՛հ ու գեղեցիկ զգացմունք, որ բոլորովին իշխում է վրադ:

Սյդ՝ այն հաստատուն համոզմունքն է, թէ այդ էակը՝ որին գրկած ես, քոնն է. դու ես ծնել նրան, քո արիւնն է, քո մարմինն է, քո գոյութեան մի մասն է, և երբ և իցէ նրա մէջ քո սեպհական յատկութիւնները կտեսնես:

Վաղ կամ ուշ, դուցէ և շատ շուտով, կարելի է շատ տարիներ վերջը, դու այս մանուկի մէջ կտեսնես քո պատկերը, քո նմանութիւնը:

Ոչ միայն քո յատկութիւնները կտեսնես մանուկիդ մէջ, այլ և նրա վրայ կերեւան և հօր յատկութիւնները՝ քիչ-շատ որոշ, կամ դուցէ փոփոխւած, և հազիւ նշմարելի:

Իսկ դուք՝ մարդ ու կին, դուք ներկայացնում էք ձեր ծնողների մանկութիւնը, սրանք էլ՝ իրանց ծնողներինը:

Ապա ուրեմն՝ այն յատկութիւնները, որ ձեր ծնողներինցն էք ստացել, կրկնում են և ձեր երեխաների մէջ աւելի կամ պակաս որոշ ձևով:

Այո՛, այս երեխադ այն անազխն շղթայի վերջին օղակն է կազմում, որի սկիզբը գտնւում է այնտեղ, ուր որ գտնւում է և ընդհանրապէս կեանքի սկիզբը:

Այստեղ իշխում է ժառանգականութեան օրէնքը \*) , որ միապէս ազդում է մարդուս ինչպէս ֆիզիքական, այնպէս էլ հոգևոր կեանքի վրայ:

Քո երեխայի հոգին ապրելու է կոչւած. երեխայի հոգին հասկանալը որքան և դժուար է, բայց և այնպէս կարելի է, ինչպէս և ամեն մի պատմութիւն:

Լոյս-աշխարհ տեսնող երեխան մտածելու կարողութիւնից զրեթէ զրկուած է. նա զաղափարներ չունի, և ոչ իսկ ունենալ կարող է:

\*) Տես «Ճառանգականութիւն և դաստիարակութիւն» բժշ. Լ. Գոլդուզեանի:

Նա կարող չէ նաև սիրել, ուրախանալ, վախենալ, սպասել. աւելին ասենք, նա չի կարող լսել ու տեսնել, և բնաւ ոչ մի զաղափար չունի ձայնի, առարկաների ձևի, գոյների, տարածութեան ու ժամանակի մասին:

Այս իսկ պատճառով՝ նորածինը բոլորովին անզօր է անձնապաշտպանութեան մէջ. և եթէ մեծերի սէրն ու խնամքը չլինէր, եթէ նա թողնուած լինէր միմիայն իւր ոյժերին, աներկբայապէս կկորսուէր՝ զրկուած լինելով տեղից տեղ շարժուելու ընդունակութիւնից անգամ:

Նորածինը չի ձանաչում իւր մօր դէմքը, նրա ձայնը. չգիտէ թէ ի՞նչ է վախը, ի՞նչ է վտանգը:

Գիտութիւնը հաստատապէս ցոյց է տալիս՝ թէ երեխայի ուղեղը ծննդեան ժամանակ կատարելապէս զարգացած չէ լինում:

Ապաքէն ուղեղը՝ պարզ ասելով, հոգու ընդունարանն է: Նեարդերը, նեարդային դրութիւնն էլ այսպէս ասենք, նոյն գլխի ու մէջքի ուղեղն է իւր մասերով:

Բ.

Նեարդային դրութիւնը ճշմարտապէս կարելի է քննարկել բոլոր դրութիւնների իշխանաւորը կոչել:

Նա ոչ միայն իշխում է մեր երեք ամենաբարձր կարողութիւնների—մտքի, զգայմունքների ու շարժողութեան վրայ, նա ոչ միայն առանձնա-

կան զգայութիւնների — տեսողութեան, լսողութեան, ճաշակի, հոտառութեան կայանն է. ոչ միայն խօսելու ընդունակութեան կենդրոնն է կազմում, այլ և հնազանդութեան մէջ է պահում քնացեալ բոլոր գործարանները իբրև ծառաներ. կանոնաւորում է նրանց գործունէութիւնը, ինչպէս որ ինքն է կամենում:

Նեարդերի ազդեցութեան շնորհիւ սիրտը զարնում է և արենապարձութեան նպաստում. թոքերը լայնանում ու շնչում են. ստամոքսն ու աղիքները՝ մարսողութեան համար անհրաժեշտ շարժումներն են կատարում:

Մի խօսքով՝ բոլոր կենսական երևոյթները հըր-հպատակ են նեարդերի իշխանութեան:

Ուղեղի նշանակութեան ու գործունէութեան մասին փոքր ի շատէ մանրամասն խօսենք:

Արենապարձութիւնից, շնչառութիւնից, մարսողութիւնից զատ՝ որոնք կենդանի օրգանիզմի մէջ կանոնաւորապէս կատարւում են, այլ և դիտակցութիւնից ու կամքի ազդեցութիւնից ջոկ՝ կան նաև ուրիշ կենսական երևոյթներ մեր մարմնի մէջ, այդ՝ զգայութիւններն են:

Զգայութիւնների միջոցով ծանաչում ենք մեզ շրջապատող առարկաններն ու իրերը, և բազմա-տեսակ շարժումներ կատարում:

Զգայութեան ու կամաւորական շարժման ընդունակութիւնը կապուած է նեարդերի և սրանց կից միւս կեդրոնական օրգանների հետ:

Նեարդերի գործունէութեան կեդրոնը գտնւում է գլխի ու մէջքի ուղեղի մէջ:

Գլխի ուղեղը գտնւում է գանգի մէջ, և պատած է լինում երկու կարծր ու մի փափուկ թաղանթով (խելապատակ). նա մի զանգուած է, որի մէջ ամեն տեղ տարածուած են անթիւ մանր ու նուրբ արենատար երակներ:

Գլխի ուղեղը կազմուած է երեք մասից. արտաքին նուրբ շերտ, կեղևային գորշ նիւթ և աւելի մեծ քանակութեամբ ուղեղային սպիտակ զանգուած:

Գլխի ուղեղը բաժանւում է երկու մասի. մեծ ուղեղ, որ գտնւում է գանգի առաջակողմը, և փոքր ուղեղ՝ որ գտնւում է գանգի յետեւի մասում, մեծ ուղեղի տակը:

Մեծ ուղեղն էլ բաժանւում է այլ և այլ մասերի, որոնք բլթակ են կոչւում, և իրանց դիրքի համեմատ կոչւում են՝ ճակատային, քնքային, ծոծրակային. ամբողջ ուղեղը զալարուածքներով կամ ծալքերով է ծածկուած:

Մէջքի ուղեղը գտնւում է ողնաշարի անցքի մէջ, և գանգային ուղեղի նման թաղանթներով է պատած:

Նա գլանաձև է և ներկայացնում է մի կակուղ զանգուած, որի դրսի մասը սպիտակ է, իսկ ներքինը գորշ է. իւր վերին ծայրով, որ կոչւում է երկայն ուղեղ, ողնածուծը (մէջքի ուղեղը) մըտնում է գանգի խոռոչի մէջ, և գլխի ուղեղի հետ է միանում:

Գլխի ու մէջքի ուղեղի գորշ զանգուածի մէջ գտնուում են անթիւ-անհամար՝ խոշորացոյցով տեսանելի մանր կէտեր, որոնք կոչուում են նեարդային հանգոյցներ, նեարդային բջիջներ:

Այս բջիջներից, կամ աւելի լաւ ասելով, այս բջիջների ծիւրերից դուրս են դալիս նեարդային թելեր, որոնք իսկոյն միանալով ներկայացնում են բաւական հաստ սպիտակ դերձան:

Գլխի ու մէջքի ուղեղի սպիտակ մասը կազմուած է անթիւ-անհամար նեարդային թելերից՝ բայց ոչ հանգոյցներից:

Դարձեալ՝ գլխի ուղեղի մէջ նեարդերը իրար կտրում անցնում են, խառնուում են, այն ինչ մէջքի ուղեղի նեարդերը իրար մօտ ձգուում են զուգահեռաբար խրճի նման:

Նեարդերը, որ բարակ թելի հաստութիւնից սկսած մինչև բմբուլի բունի հաստութիւն են ունենում, տալիս են բազմաթիւ ճիւղաւորութիւններ, որոնք վերջանում են մեր մարմնի այլ և այլ մասերում: Բայց նրանք այնքան նուրբ ու քնքուշ են լինում, որ միայն խոշորացոյցով են տեսնուում:

Գ.

Եթէ գլխի ուղեղի որևէ մասը փնասուի, փոփոխութեան կենթարկուին նաև նեարդային բջիջները, և նայելով թէ որ մասն է փնասուած՝ ըստ այնմ կամ խօսողութեան ընդունակութիւնը կկորսուի, կամ զգայականութիւնը և կամ շարժուելու կարողութիւնը:

Այսպէս օրինակ՝ եթէ փնասուի ձախ ծակատային բլթակի որոշ կէտը, մարդս բառեր կազմելու ընդունակութիւնից կզրկուի: Եթէ խանգարւին ուղեղի այս կամ այն մասերը, ձեռներն ու ոտները կանդամալուծուին, տեսողութիւնը կկորսուի, ականջը կխլանայ և այլն:

Մեր մարմնի որևէ մասի գործառնութիւնը իսպառ կդադարի, եթէ այդ մասը գլխի ուղեղի հետ կապող նեարդը կտրուի:

Առանձին նեարդերից պէտք է յիշատակել նախ և առաջ տասներկու զոյգ նեարդերը, որոնք գլխի ուղեղից են ծագում, և գանգի խոռոչից դուրս են գալիս՝ ոսկրների միջև առանձին ծակերով:

Նրանցից մի քանիսը, օրինակ, հոտառութեան, տեսողական, լսողութեան ու ձաշակելիքի նեարդերը համապատասխան զգայութիւններ են հաղորդում մեր ուղեղին:

Մէջքի ուղեղից դուրս են գալիս երեսուն մէկ զոյգ նեարդեր. նրանցից ամէն մէկը ունի առաջակողմեան ու յետնակողմեան արմատ. առաջինը շարժողական նեարդ է, իսկ յետինը՝ զգացողական:

Այսպէս օրինակ՝ երբ հիւանդանում կամ փնասուում է ողնաժուծային որևէ նեարդի յետնակողմեան արմատը, այն ժամանակ նոյն նեարդին համապատասխանող մարմնի մասը իւր զգացականութիւնը կորցնում է:

Այն ինչ՝ եթէ փնասուի միևնոյն նեարդի առաջակողմեան արմատը, այն ժամանակ համա-

պատասխանող մկանունքը շատ կամ սակաւ անպա-  
մալուծւում է:

Սրտաքին աշխարհի տպաւորութիւնները  
ստացւում ու հաղորդւում են գլխի ուղեղին առան-  
ձին օրգաններով, որոնք զգայարանք են կոչւում.—  
տեսանելիք, հոտառելիք, ճաշակելիք, լսելիք և  
շօշափելիք:

Այսպէս՝ երբ մեր բերնի հիւթի մէջ որեւիցէ  
նիւթ է լուծւում, գրգիռ է առաջ գալիս:

Այդ գրգռմունքը՝ ճաշակառութեան նեարդե-  
րի միջոցով, որոնց ծայրերը վերջանում են առան-  
ձին ծծուկների մէջ, և փռուած են լեզուի վրայ,  
գլխի ուղեղին է հաղորդւում, և այդ կերպով համի  
զգայութիւն է առաջ գալիս:

Հոտառութեան զգայութիւն ստանում ենք  
երկու նեարդերի միջոցով, որոնք գլխի ուղեղից  
գալիս մտնում են քթի խորշը, և այնտեղ լորձնա-  
թաղանթի մէջ ձիւղաւորւում են:

Հոտառութեան նեարդերը գրգռւում են մի-  
միայն ցնդող նիւթերով, որոնք օդի հետ քթի մէջ  
են մտնում:

Աւելորդ իսկ է ստել որ կենդանիների ուղեղը՝  
իրանց կազմութեամբ աւելի պարզ, արգանդային  
կեանքումն արդէն աւելի մեծ հասունութեան ու  
կատարելութեան են հասնում, քան թէ անհամե-  
մատ բարդ մարդկային ուղեղը, որը երեխայի ծնւ-  
ւելու ժամանակ և դեռ մի քանի տարի վերջը շա-  
րունակւում է կազմակերպուել ու զարգանալ:

Բայց որքան կարեւոր է ուղեղի անթերի ու  
ամբողջական կազմութիւնը՝ նեարդային ու հոգե-  
կան գործառնութիւնների ճշտութեան ու հաստա-  
տութեան համար:

Սակայն մեծապէս ցաւալի է, որ նեարդային  
ու հոգեկան առողջ ու կանոնաւոր զարգացման  
ընթացքից կեանքի մէջ պատահում են բազմաթիւ  
ու բազմատեսակ խոտորմունքներ:

Դ.

Հոգեկան զարգացման տեսակէտից համեմատե-  
լով կենդանիները մարդկանց հետ՝ կարելի է ասել,  
թէ մարդս արդէն իսկ իւր ուղեղի կազմութեամբ  
ներկայանում է գլխաւորապէս իբրև խոհուն, մտա-  
ծող էակ:

Կենդանիները առաւելապէս տեսնող, լսող, հո-  
տառող էակներ են, և ամենից աւելի նուազ մտածող:

Կենդանիները չեն խորհում կեանքի բարձրա-  
դոյն խնդիրների մասին, չեն մտածում անցեալի  
մասին, չեն նայում դէպի ապագան, և համարեա  
կարող չեն այս ամենը անել որովհետև այն բար-  
ձրագոյն օրգանը, ուղեղի այն բարձրագոյն կեդրոն-  
ները, որոնցով մարդս առատօրէն օժտուած է,  
նրանց մէջ նախնական, սկզբնական վիճակ են  
ներկայացնում:

Նեարդային դրութեան զարգացման բարդ ճա-  
նապարհը մարդս անցնում է մասամբ արգանդային  
կեանքում, մասամբ էլ ծնուելուց յետոյ:

Ծնողների ամենասրբազան պարտքը պիտի լինի դիտել ճետամուտ լինել մանուկի հրաշալի զարգացման, արվելք չլինել որ այս զարգացումը անխափան առաջանայ ու անարգել կատարելագործուի մեր աչքի առաջ:

Նորածին մանուկի միմիայն ստորին կեղրոններն են լիովին զարգացած լինում, այսինքն՝ երկայն ուղեղը իւր մասերով—բուսական կեանքը, իսկ յիշողութեան ու իմացականութեան կեղրոնները՝ միմիայն հոտառութեան ու ձաշակելիքի կեղրոնները: Ֆնացեալները—տեսողականն ու լսողականը—մասամբ են միայն զարգացած լինում, իսկ բարձրագոյն կեղրոնները՝ ամենեկին:

Դիտողութիւնները հաստատում են, որ կեղրոնների զարգացման աստիճանին համեմատ՝ այս կամ այն հոգեկան կարողութիւններն էլ զարգացած են լինում, հոգեկան այս կամ այն ընդունակութեան արտայայտութիւնը հազիւ է նշմարւում, եթէ կեղրոնը թոյլ է զարգացած լինում:

Լոյս — աշխարհ գալու առաջին օրերում՝ մանուկը անընդհատ քնում է. զարթնում է միմիայն քաղցի ազդեցութեան տակ, անում է բազմատեսակ անկանոն ու անկարգ շարժումներ, լալիս է, և յաճախ՝ խղձալի ձայնով:

Երբ նրան կերակրում են, նա կշտանում է, հանգստանում և իսկոյն քնում:

Քունը տեւում է մինչև նրա կրկին քաղցեանալը:

Բայցի քաղցից՝ մանուկը զարթնում է նաև այլ և այլ ցաւառիթ տպաւորութիւնների տակ.— գնդասեղի ծակելուց, աղիքների կարտունքից և այլ այսպիսի ցաւերից. երեխան զարթնում է, ձջում է, և ուրիշ ոչինչ անել կարող չէ:

Հանգստութիւն, քուն, ուտել—նորածնի ամենաէկան պահանջներն են:

Բայց ի՞նչ է կատարւում նորածնի հոգու մէջ, նրա նեարդային գրութեան մէջ:

Ե.

Մանուկը ուքն է քաշում, երբ գարշապարն են խողտում, կամ գնդասեղով ծակում: Կոպերն է փակում, երբ որևէ բան աչքին է կպչում: փոքրդատում ու հազում է, երբ մի բան է ընկնում շնչափողի վերին մասում:

Այս բոլորը զուտ նեարդային երևոյթներ են, որոնք դիտութեան մէջ կոչւում են անդրադարձ (ռեֆլեկտո) գործողութիւններ, որովհետև կատարւում են ճիշտ այնպիսի մեքենայական հարկաւորութեամբ, ինչպէս որ գեաին խփուող ռեաինէ գնդակը վերև է բարձրանում:

Պրոֆեսոր Սիկորսկու ասելով՝ կարիք չկայ կարծելու, թէ այսպիսի անդրադարձ գործողութիւնների մէջ միջամտում է իմացական հոգին:

Առանց այսպիսի միջամտութեան էլ շատ բան կարող է կատարուել մարդկային հոգու մէջ՝ նրա մասերի հանձարեղ կապակցութեան շնորհիւ, ինչ-

29-10045

պէս որ ժամացոյցը բանում է, քանի որ լարուած զսպանակի առաձգական ոյժը թուլացած է, և կամ ինչպէս որ սարդի ոտը դաշնակաւոր (ռիթմիկ) շարժումներ է անում և այլն:

Մարդու օրգանիզմի մէջ կան նեարդային յօրինուածներ (մեխանիզմներ) աւելի ևս հանձարեղ կազմակերպուած, և միանգամայն իրանք իրանց կանոնաւորող այսպէս է օրինակ՝ սրտի կանոնաւորող կազմութիւնը. բայց աւելի ևս բարդ, աւելի ևս զարմանալի յօրինուած (մեխանիզմ) է մարմնի ջերմութիւնը կանոնաւորողը:

Ահա օրինակներ:

Ծնուելուց անմիջապէս յետոյ նորածնի առաջին շնչառութիւնը հետեանք է այն բանին, որ թթուածինով \*) յագեցած մօր արիւնը դադարում է այլևս հոսել մանուկի մարմնի մէջ:

Նորածնի արեան թթուածնի պակասութիւնը զրգուում է երկայն ուղեղի նեարդային բջիջները, և այս զրգումամբ շնչառութեան կեդրոնը գործել է սկսում:

Արեան սնունդ տուող նիւթի պակասութիւնը նոյնպէս զրգուում է բոլոր նեարդային դրութիւնը, և մասնաւորապէս ծծելու, կուլ տալու, ինչպէս և ձայնի յօրինուածը (մեխանիզմ):

Ահա այս ընդհանրական զրգուման շնորհիւ երեխան հանգստեան վիճակից դուրս է դալիս,

\*) () դի բաղադրիչ մասերից մէկն է թթուածինը, որ մարուբ արիւնի մէջ ևս գտնուում է:

արթնում է, շարժումներ է կատարում, ճշում է և այլն:

Ճիշտ այս կերպով բացատրուում են ընդհանրապէս շնչառութեան, մարսողութեան, արտաթորման, ծծելու, կլանելու և այլ երևոյթները:

Երբ երեխան զարշապարը խտտելիս ոտքն է շարժում, կամ կերակրափողի մէջ հեղուկ ընկնելիս՝ կուլ է տալիս, այս երևոյթի պատճառը նեարդային ծայրերի զրգումունքն է, որոնք ցրուած են ինչպէս կաշու, այնպէս էլ լորձաթաղանթի մէջ և այլ տեղերում:

Մի խօսքով՝ այս բոլոր նեարդային երևոյթները զանազանուում են այնպիսի երևոյթներից, որոնց վրայ իսկապէս հոգեկան յատկութիւնների գրոշմ է երևում:

9.

Նոր ծնուած երեխան արդէն իսկ ճաշակի ու հոտառութեան ծանօթութիւններ ունի, և այս տեսակ ծանօթութիւնների վերաբերմամբ կարող է իւր ուշադրութիւնը լարել:

Օրինակ. երեխան ոչ միայն կարող է որոշել անուշն ու դառնութիւնը, թթուն ու աղին, այլ և համապատասխան շարժումներ անել. այսինքն՝ քաղցրը ծծում է, իսկ թթուն, դառնը ու աղին չի ընդունում, և չափահասների նման աշխատում է անախորժ նիւթը իւր բերնից հեռացնել:

Թէ յիրաւի նորածինը ամենայն ճշտութեամբ

զանազանում է կերակրի համը, և թէ արդարև ճաշակի ծանօթութիւն և ուշադրութիւն ունի երեխան ճնուելիս, ինչպէս և իբրև հետեանք այս ծանօթութեան կամք է ցոյց տալիս, այս ամենը հաստատող բազմութիւ փաստեր կան: Ահա օրինակներ.

Պոէեոի օրդին ճնուելուն երկրորդ օրը կովի ջրախտն կաթ խմեց, բայց չորրորդ օրը այլևս չէր կամենում խմել, որովհետև ծանաչեց կաթի յատկութիւնը:

Այս ծանաչումը նախապէս թոյլ էր, հետզհետէ աւելի պայծառ դարձաւ, և սրա համեմատ կամքն էլ զարգացաւ. չորրորդ օրը կաթի յատկութեան ծանաչումը բոլորովին պայծառ դարձաւ, կամքն էլ լիովին զօրացաւ, և մանուկը հրաժարուեց առաջարկուած կաթը խմելուց, որ իրան անպէտք էր:

Այս օրինակը միանգամայն պարզ ցոյց է տալիս, թէ ի՞նչ տարբերութիւն կայ հոգեկան ու նեարդային գործողութիւնների (ակա) մէջ:

Մանուկը առաջին անգամ անպատշաճ յատկութեամբ կաթը խմեց, որովհետև ուշադրութիւն չդարձրեց. բայց յետոյ նրա մէջ մի առանձին բան նկատեց:

Յաջորդ անգամներին նա աւելի պարզ ու որոշակի յիշեց, թէ կաթը անարատ, բնական չէր, և այնուհետև նրա մէջ կամք առաջացաւ այլևս այսպիսի կաթ չխմելու, և չնայելով իւր քաղցին ու ծարաւին՝ նա բաց է ի բաց հրաժարուեց կերակրից:

Այս բոլորի մէջ երևում են իսկապէս հոգեբանական երեւոյթներ—անցեալի պարզ յիշողութիւն, ծանաչելու ընդունակութիւն և համապատշաճ կամք:

Խարդախուած կաթի դէմ մանուկի արտայայտած բողոքը մարդկային իմացական հոգու գործունէութեան նշանն է:

Եւ խելացի մայրը—նրա սուրբ պարտականութիւնն է այս—կամ ինքը պիտի կերակրէ իւր տղին, կամ եթէ հիւանդութեան պատճառով անկարող է բժշկի խորհրդովն ու քննելովը առողջ ծծմայր պիտի վարձէ:

Համ ծանաչելու կարողութեան նման նորածինները ունին նաև հոտի ծանաչում:

Նա տարբերում է հոտի ապաւորութիւնները, և շատ անգամ կաթ չի խմում, եթէ նրանից մի ուրիշ նիւթի հոտ է առնում:

Բայց այս էլ պէտք է ասել, թէ հոտերը խիստ ազդում են երեխայի վրայ:

Հոտոտելիքի վրայ ազդող նիւթերը նեարդային ամբողջ գրութիւնն են զրգուում, ուստի և կարող են հանգստութիւնը, քունը խանդարել, այն ինչ խօսելը, ձայնը այնքան չեն ներգործում նրա վրայ:

Այս ժամանակները երեխան ձայնի և համարեա թէ լոյսի գաղափար չունի:

Է.

Քիչ-շատ կարելի է ճանաչել թէ երեսան հիւանդ է արգեօք:

Թուլամիտ ու մաւորապէս յետամնաց մանուկների վրայ նկատուած Փակտերը շատ խրատական էն:

Այս թշուառ երեսաններն իրենք էլ չգիտեն, կո՛ւշտ են թէ քաղցած. յաճախ նրանց ճաշակառութեան ու հոտառութեան զգայութիւնը խանգարուած է լինում. բերան են դնում կամ ուտում անմարսելի, չուտուելու և վնասակար նիւթեր, որ չեն սնում առողջ երեսան:

Բժշկի գործն է փորձեր անել երեսայի վրայ, որոնք և ժամանակին ցոյց կան, թէ արգեօք երեսայի հոգեկան զարգացումը կանոնաւոր կերպով է առաջ գնում:

Ծնողաց գործն է՝ դիտել իրենց երեսայի կեանքը, դիտել նրա զարգացման հրաշալիքները:

Առաջին օրերում դիտողութեան նիւթ կարող է լինել երեսայի դէմքի արտայայտութիւնը, որ նա ցոյց է տալիս կերակուր ընդունելիս, կերակրուելուց յետոյ բերանը ողողելիս կամ հանգստութեան ժամանակ:

Նորածինը ընդունակ է իւր մատղաշ հոգևով միմիայն հաճոյական ու անհաճոյ վիճակներ զգալ:

Հաճոյական զգացումները նորածինը արտայայտում է աչքերը մեծ-մեծ բանալով, որոնք սովորականից աւելի փայլում են:

Իսկ անհաճոյ զգացումը արտայայտում է աչքերը բոլորովին կամ կիսատ փակելով. երբ անհաճոյական զգացումը աւելի զօրեղ է լինում՝ միաժամանակ և ձչում է:

Նորածնի ձիչը առանց արտասուքի է լինում: մատաղ հոգին լալիս է առանց արտասուք թափելու մինչև երրորդ ամիսը. այս ամսից սկսած նրա լացը արտայայտուում է կանչով ու արցունքով:

Անհաճոյական զգացումն է ունենում երեսան ոչ միայն քաղցած ու ծարաւ ժամանակ, այլև երբ յոգնած է, կամ երբ որ պինդ է փաթաթուած, այնպէս որ շունչ առնելիս՝ ստիպուած է կաշկանդող կապերը քակել. կտրուկ հոտերը նոյնպէս վատ են ազդում մանուկի վրայ:

Պարզ է, թէ նորածնի վշտի պատճառները որքան քիչ են:

Բայց երեսան լոյս—աշխարհ տեսնելուց յետոյ ոչ միայն Ֆիզիքական խնամքի է կարօտ, այլև պէտք է բաւականութիւն տալ նրա հոգեկան պահանջներին:

Մայրը պէտք է ճանաչէ իւր երեսային և օգնէ նրա մտաւոր ու բարոյական զարգացման. այս իւրաքանչիւր մօր սուրբ պարտականութիւնն է:

Ը.

Մանուկները լոյս—աշխարհ տեսնելուց յետոյ՝ առաջին երեք ամիսներում կամաց-կամաց սովորում են լսել, տեսնել ու շօշափել:

Տեսնելը, լսելն ու շոշափելն այնքան հասարակ բաներ չեն, որ սովորել պէտք չլինի:

Աչքը, ահանջն ու մեր շոշափող մատները շատ բարդ գործիներ են:

Ինչ որ ճաշակառութեան ու հոտառութեան վերաբերմամբ կատարուում է արգանդային կեանքում, նոյնը միւս զգայարանքների նկատմամբ լինում է առաջին երեք ամիսներում, այն էլ՝ սովորելով ու կանոնաւորապէս գործադրելով:

Չմոռանանք որ տեսանելիքն ու լսելիքը հոգեկան կեանքի ու զարգացման հիմքն ու արմատն են կազմում. և այս շրջանը մանուկի զարգացման ամենանշանաւոր շրջաններից մէկն է:

Ի՞նչ գործիքով է ծանաչում երեխան արտաքին աշխարհն ու իւր անձը:

Իւր սեպհական անձը ծանաչելու ամենամերձաւոր գործին, ինչպէս վերեւում ասացինք, այն բազմաթիւ զգացողական նեարդերն են, որոնք փոռւած են մեր կաշու, լորձաթաղանթի, մկանունքների ու ներքին գործարանների մէջ:

Այս զգացողական նեարդերի միջոցով, որոնք միլիոնաւոր են, ամեն մի բույէ մեր ուղեղին հաղորդում են հազարաւոր տպաւորութիւններ, որոնք հաստատուում են առանձին կեդրոնների մէջ, և երրորդ ամսի վերջին բոլորովին զարգացած են լինում:

Աւելի պարզելու համար՝ մի անգամ էլ կրկնենք, ինչ որ ասել ենք:

Եթէ որեւիցէ իր մեր մարմինը շոշափէ, կամ մեր մարմնի մի մասը սղմուի, ճնշուի, եթէ անմիջապէս շփուելով սաք կամ ցուրտ առարկայի հետ նա սառի կամ տաքանայ, եթէ վերջապէս մեր կաշին այնքան զրգուի, որ ցաւի զգացողութիւն առաջանայ, այն ժամանակ այս բոլոր դէպքերումն էլ նախնական զրգիւր նեարդային թելերով գլխի ուղեղին է հաղորդուում:

Իսկ այս կեդրոնը մանուկի ծննդեան առաջին օրերում վերջնականապէս զարգացած չի լինում, այս պատճառով էլ երեխայի անձնագիտակցութիւնը խիստ անկատար է:

Կարելի է միանգամայն համոզուել, թէ երեխան կեանքի այս շրջանում ցուրտն ու տաքը շատ քիչ է զանազանում. շատ թոյլ է զգում շոշափուած իրը, և մինչև անգամ ցաւի վերաբերմամբ էլ այնքան դիւրագգաց չէ, ինչպէս վերջերն է լինում:

Միակ տեղը, ուր շոշափական ու տաքի զգայնութիւնը զարգացած է, այդ կաշին է, և շրթունքների լորձաթաղանթը:

Այն ամենը՝ ինչ որ չափահասը ձեռներով է որոշում, երեխան իւր կեանքի առաջին ժամանակում բերանն է առնում:

Պրոֆեսոր Սիկորսկին սպացուցանում է, որ այս շրջանում երեխան շրթունքներով առարկաներ է զգում ոչ թէ միայն երբ շոշափում է, այլ և երբ առարկաները հեռու են. այս լինում է շրթունքների ու դէմքի ջերմութիւն զգալու ընդունակութեամբ:

Այսպէս կամ այնպէս՝ երեխան իւր ծնուելու առաջին ժամերում կամ օրերում պէտք չի ունենում կամ երբեմն էլ անկարող է լինում մօր ծիծը ուտելու, մինչև որ կարգին սովորում է:

Ինչպէս յայտնի է, զգացումները կազմւում են բազմաթիւ զգայութիւններից, որոնք մարմնի այլ և այլ գործարաններից, նեարդերի միջոցով հաղորդւում են, նոյնպէս և այն զգայութիւններից, որոնք ծագում են ուղեղի նեարդային բջիջների (նեռոն) անմիջական գրգռումից, որը առաջացնում են արիւնի բաղադրիչ մասերը:

Օրինակ. թթուածինով առատ մաքուր արիւնը գրգռում ու կենդանացնում է նեարդային բջիջները (նեռոն), այն ինչ հիւանդութիւններն ու այն դէպքերը՝ որոնք արիւնի բաղադրութիւնը փոփոխում են ու նրա մէջ թոյներ են առաջացնում (տոկսին), նեարդային զրութիւնը տկարացնում են:

Կեանքի լաւ պայմաններում՝ մանուկի նեարդային զրութիւնը աւելի կենսունակութիւն է ցոյց տալիս, աւելի ոյժ. այս մի տեսակ գիտութիւն կամ լաւ ասենք՝ ինքնագիտակցութիւն է:

Թ.

Տեսողական ծանօթութիւնների զարգանալու կերպը՝ աւելի պայծառ հասկացողութիւն կարող է առլ մեզ այն ամենաբարդ գործողութիւնների մասին, որոնք կատարւում են ծննդեան առաջին երեք ամիսների ընթացքում:

Թէ ինչպէս է զարգանում տեսողութիւնը. այս կարևոր խնդրի բացատրութիւնը գիտութիւնը պարտական է յայտնի պրոֆես. Պռէեռին:

Երեակայէնք որ մեր աչքին դիտակ է դրած, որի երկու մասերը անշարժ չեն միացած, այլ շարունակ շարժւում են, և այլ և այլ կողմեր են ցոյց տալիս, այնպէս որ իւրաքանչիւր բոպէ աչքերից ամեն մէկին նոր պատկեր է ներկայանում, որ աւելի ևս անորոշ է լինում, երբ առարկաները շարժւում են:

Դժուար չէ երեակայել, թէ որքան աշխատանք է հարկաւոր լինում որևիցէ առարկայ պարզ տեսնելու համար:

Ճիշտ այսպէս են և տեսողութեան պարագաները, որոնց մէջ գանւում է երեխան ծնուելու առաջին երկու ամիսներում:

Երեխան մեծ ջանք ու անվաղրում աշխատանք պիտի թափէ իւր տեսողութեան գործին յարմարեցնելու համար, այն էլ ինքը, առանց ուրիշն օգնութեան:

Օրօրոցի մէջ առանձնացած՝ մանուկը անգագրում աշխատում է, և ուտելուց ու քնից ազատ մնացած բոպէները գործ է դնում տեսողութիւնը վարժեցնելու:

Քնելուց ու հանգստանալուց յետոյ՝ երեխան կրկին սկսում է նայել, և մինչև իսկ ուտելու ժամանակ աչքը չի հեռացնում իւր սանտու մօրից:

Եթէ պատահմամբ շողք չընկնի երեխայի աչքին՝ նա երկար ժամանակ միակերպ կրնայի՝ կար-

Տես լոյսից արբեցած, այնպէս որ կարծես թէ այս ժամանակ երկու աչքերն էլ միակերպ լոյս են ստանում:

Երեխայի աչքերը մի ուղղութեամբ, միաբան չեն շարժուում, այլ բաժան-բաժան. մէկը՝ աջ կողմը, միւսը՝ ձախ կամ վերև:

Սակայն այսպիսի անկանոն շարժումների ժամանակ երբեմն պատահմամբ միացեալ ու կանոնաւոր շարժումներ էլ են կատարուում:

Ժամանակ-ժամանակ երեխայի աչքը պողած մնում է, մինչև իսկ առաջին օրերում. այս ուրիշ բան չէ, բայց եթէ ապագայ տեսողութեան սկզբնական վարժութիւն:

Տեսնելու կարողութեան զարգացման երկրորդ շրջանը կազմում է աչքը մի առարկայից միւսի վրայ դարձնելը:

Եթէ տեսնուում լոյսի երկու անշարժ աղբիւրներ կան, օրինակ՝ պատուհան ու ճրագ, երեսան նախ մէկի վրայ է նայում, և յետոյ աչքը միւսին է ուղղում՝ դարձնելով ոչ միայն աչքը, այլ և գլուխը:

Երրորդ շրջանում երեխան արդէն սովորում է շարժուող առարկաներին աչքով հետևել, առանց առաջուայ պէս գլուխը շարժելու:

Տեսողութեան զարգացման չորրորդ աստիճանը կազմում է աչքի յարմարացումը, ինչպէս որ մեծերս դիտակով նայելիս՝ աշխատում ենք դիտակը քիչ-շատ մեր աչքին յարմարել:

Այս բոլոր աստիճանները երեխան անցնում է կեանքի առաջին երեք ամիսներում. իսկ չորրորդ ամսի սկզբում առաջին անգամ սկսում է պարզ լոյս-աշխարհ տեսնել:

Այսպէս են զարգանում առողջ երեխաները:

Շատ ապուշներ (իլիոաներ) թէև իրենց աչքը ուղղում են, թէև իրենց հայեացքը անկում են մի բանի վրայ, բայց երկար չեն կարողանում նայել, այլ անդադար իրենց աչքը շփշրջում են, և չեն կարող հետևել շարժուող առարկաների:

Ո՛րքան աչք աշխարհիս վրայ. բայց միթէ ամեն նայող աչք բնութեան վէճով չէր տեսնում է:



Երեխայի հոգեկան զարգացման յետագայ աստիճանները լսողութիւնը աւելի մեծ նշանակութիւն ունենում են թէ տեսողութիւնը:

Համոզուելու համար՝ բաւական է ուշադրութիւն դարձնել կոյր աղաների և խուլ մանուկների վրայ:

Խուլ աղան մտաւորապէս աւելի ծանր է զարգանում, քան թէ կոյրը. և այս նկատուում է շատ կանուխ, մինչև իսկ կեանքի առաջին ամիսներում:

Կարելի է իբրև ճշմարտութիւն ընդունել որ աղայք երկրորդ կամ երրորդ շաբաթում սկսում են լսել:

Թէ երեխաները լսում են, յայտնի նշան կարող

է լինել այն, որ սուր ձայնի ժամանակ նրանք աչքերն են խփում:

Ամեն մի անսպասելի ձայնի ժամանակ նրանք աչք են փակում, և այնքան անգամ, որքան որ ձայնն է կրկնում: կարծես թէ երեսան վախեցած է:

Եթէ ձայներն աւելի ուժեղ ու երկարատև լինին, երեսան ամբողջապէս ցնցւում է, և մինչև իսկ կարող է լալ:

Երկրորդ կամ երրորդ ամսի վերջերին երեսան զլուխը դարձնում է այն կողմը, որտեղից ձայն է լսում, և ընդհանրապէս ձայնի ուղղութիւնը լաւ է գտնում:

Եթէ հանդարտ ու աննկատելի կերպով դիտես երեսային այն ժամանակ, երբ քնից զարթնելով թաւալում է անկողնի մէջ, կնկատես, որ նա ականջ է դնում իւր հանդերձի, իւր շարժումների ու շնչառութեան շշուկին:

Դիտելով երեսային՝ կարելի է տեսնել, որ նրա ուշադրութիւնը լարուած է, որ դէմքի արտայայտութեան մէջ իմնցականութիւն է երևում, և այդ ցոյց է տալիս երբ մի բան ուշադրութեամբ դիտում է:

Օրինակ. եթէ ստնտուի ետևը կանգնած երեսայի ականջին ժամացոյց դնես՝ երեսան զլուխն ու աչքը իսկոյն ձայնի կողմն է դարձնում:

Նեարդային այս շարժման մէջ է ծածկուած երեսայի մտաւոր զարգացման ամենախոշոր աղ-

բիւրներից մէկը՝ ինչպէս որ իրաւամբ նկատում է պրոֆեսոր Սիկորսկին:

Առողջապահութիւնը պահանջում է՝ առաջին երեք ամիսներում երեսայի հոգեկան զարգացման չնպաստել, որ առանց այն էլ արագ ընթացքով առաջ է գնում:

Շատ փաստակար են զօրեղ ու երկարատև սպաւորութիւնները:

Տեսնելը, լսելը ինքնին արդէն յոգնեցնում է երեսային. յոգնեցնում, թուլացնում է նաև չափազանց տաք կամ ցուրտ սենեակը, ինչպէս և որեւիցէ հոտ:

Վերջապէս կարող է յոգնեցնել երեսային՝ մօր կամ ստնտուի անբաժան հետը լինելը. շատ օգտակար է երբեմն թողնել նրան ինքն իրան:

Առաջին ամիսներում շատ օգտակար է բաւականաչափ քունն ու հանդարտութիւնը, մանաւանդ երկար ժամանակ անկողնում մնալը:

Անքնութիւնը հիւանդութիւն է. պէտք է խորհրդակցել բժշկի հետ:

ԺԱ.

Առաջին երեք ամիսներում երեսան սովորում է տեսնել, լսել ու շօշափել:

Երրորդ ամսի վերջերին երեսայի առաջ մի ուրիշ խնդիր կայ—պէտք է մտածել՝ սովորել՝ հասկանալու համար այն, ինչ որ վրսից է ստանում:

Երեխաների ստացած նեարդային զրգիւները, որոնք ուղեղին են հաղորդուում, նոյնպէս չափազանց մեծ են:

Օրինակներ. լսողութեան գործարանը (ապարալը), կորաեան գործիք կոչուածը, պարունակուում է իւր մէջ երեսուն հազարից աւելի թեփանման աղեղներ, որոնք օդի ամենաթոյլ թրթուումից անգամ գողգողուում են:

Աչքի ցանցամուշկը մօտ երեք ու կէս միլիոն լոյս զգացող նեարդային ծայրեր ունի, որոնց միջոցով լուսային տպաւորութիւնները ուղեղին են հաղորդուում:

Կաշին՝ զգայարանքներից ամենակոշար, պարունակուում է այնքան շատ շոշափական բարձիկներ, որ ցուցամասի ամեն մի շոշափման ժամանակ՝ այսպիսի բարձիկներից գրեթէ երկու հազար հաս են սեղմուում՝ ամեն մէկը առանձին զգայութիւն տալով:

Եթէ միաք անես, որ ամեն մի զգայութեան ուղեղին հասնելը տևում է մի երկվայրկեանից շատ աւելի պակաս, այն ժամանակ ամեն մի երկվայրկեան հոգու մէջ թափանցող զգայութիւնների թիւը անհամար կլինի:

Այսպէս հրաշալի է նեարդային զրութեան կազմը, որի մէջ ապրում ու հասունանում է մարդկային միաքը:

Ուղեղի մէջ մտնող միլիոնաւոր տպաւորութիւններն ընդունուում են այն բազմաթիւ նեարդային ձիւղաւորութիւնները, որ ունի ամեն մի նեարդային բջիջ:

Նեարդային բջիջները, ինչպէս ասել ենք, իբրև գործադիր մարմին՝ դուրս են հաղորդում այն ամենը, ինչ որ հոգու մէջ է կատարուում. — ցանկութիւններ, ձգտումներ, փափաքներ —, և այն ամենը, ինչ որ առաջ է դալիս նեարդային գրութիւնից:

Վերջապէս նեարդային բջիջները կողմնական ելուստներ — կողւատեռալ — ունին, որոնց նպատակն է ուղեղի հեռաւոր մասերի աշխատանքը կապակցել, և նեարդային գրութեան բովանդակ գործունէութիւնը մի ամբողջական միութեան վերածել:

Ելուստները մտածողութեան մէջ մեծ նշանակութիւն ունին. եթէ հիւանդութեան պատճառով նրանք վնասուին, միանգամայն մտածելու ընդունակութիւնը խախտուում է, յիշողութիւնը ոչնչանում, ինչպէս և զաղափարների տրամաբանական կապակցութիւնը:

ԺԲ.

Մինչև չորրորդ ամիսը երեխայի յիշողութիւնից մօր ձայնի ու դէմքի տպաւորութիւնը իսկոյն և եթ անհետանում է, հէնց որ դադարում է նրան տեսնել կամ ձայնը լսել:

Ամեն անգամ երբ տպաւորութիւնը կրկնուում է, երեխային այնպէս է թւում, թէ նոր է, թէ առաջին անգամն է ստանում:

Բայց չորրորդ ամսից սկսած՝ երեխան արդէն յիշում է անցեալ տպաւորութիւնները, և, օրինակ, տեսնելով մօր դէմքը, ճանաչում է, այսինքն՝ յիշում է, որ նրան տեսել է:

Այս ամենը մանուկի դէմքի վրայ ուրախութեան ժպիտ է առաջացնում: այս մտածականութեան առաջին նշոյլն է:

Բայց ապուշ տղայքը այդպէս չեն լինում:

Այս թշուառ երեխաները քիչ են հասկանում և շատ քիչ են զանազանում անցեալ տպաւորութիւնները: Իրանց մօրը չեն ճանաչում, և նրան երբեմն մայր, երբեմն էլ նեանեայ են կոչում՝ չճշտելով մէկին միւսից, հասկանալով մարդկային յարաբերութիւնների տարբերութիւնները:

Այս շրջանի—չորրորդ ամսից մինչև տասներորդ ամիսը—ամենանշանաւոր երևոյթը այն է, որ երեխան տպաւորութիւններ է փնտռում:

Արթուն երեխան ամեն մի բոսիկ աշխատում է տպաւորութիւններ ձեռք բերել:

Եթէ նրա աչքի առաջ դրած լինի ձեռք կամ մի այլ անթափանցիկ մարմին, նա գլխով մեծ շարժումներ է անում՝ միւս կողմը դուրս ձուլալով անտեսելու համար. աչքը ծածկող լաթը նրան մեծ տհաճութիւն է պատճառում:

Աչքին պէս՝ քնացեալ բոլոր զգայարանքներն էլ արտաքին աշխարհի ամեն մի թոյլ տպաւորութեան արձագանգ են տալիս:

Այս տպաւորութիւնները հետզհետէ բոլոր նեարդային դուրսութիւնը, այսպէս ասենք, վարակում են այնքան ոյժով, որ ճշմարիտն ասած՝ բաւական է լեռներ տեղից տեղ շարժելու:

Այսպէս է կազմուած մարդս, այս է ուսուցանում գիտութիւնը:

Վերոյիշեալ շրջանում՝ տպաւորութիւններ որոնելուց զատ՝ երեխայի կեանքի մէջ մի ուրիշ բնորոշ կէտ ևս երևում է, այդ՝ ուշադրութիւնն է:

Ուշադրութեան բնորոշ յատկութիւնն է, ինչպէս արդէն ասել ենք, այս կամ այն զգայարանքը ուղղել որոշ տպաւորութեան կողմը, օրինակ՝ հայեացքը ձգել մի յայտնի առարկայի վրայ. ականջը դարձնել ձայնի ուղղութեամբ և այլն:

Երեխայի ուշադրութիւն ունենալու ամենայայտնի նշաններից մէկը՝ շնչառութեան յանկարծակի ընդհատումն է. ուշադիր մանուկները յաճախ են ընդհատում իրենց շնչառութիւնը:

Մանուկի որ և իցէ առարկայ երկար դիտելը ցոյց է տալիս նրա ուշադրութեան չափը և սկզբնաւորող կամքի ոյժը:

Հինգերորդ և մանաւանդ վեցերորդ ամսում արդէն ուշադրութիւնը հաստատապէս զարգացած է լինում, այնպէս որ ուրիշ առարկաներ կարող չեն միանգամից երեխային գրաւել:

Ուշադրութեան ոյժն ու աստիճանը կարող են հիմք լինել որոշելու համար, թէ մանուկի զարգացման ընթացքը կանոնաւոր է արդեօք, թէ անկանոն:

Ուշադրութեան թուլութիւնը կամ չզոյութիւնը ցոյց է տալիս, թէ մանուկի մտաւորական զարգացումը դանդաղում է, լրիւ չէ, ցոյց է տալիս, թէ արդէն ապուշութիւն է սկսում:

Առողջ երեխայի համար մտաւորական բոլոր գործողութիւնները, որ սովորաբար տրամաբանա-

կան են կոչուում, այսինքն՝ կապակցական, նոր ու անսովոր բաներ են, որ երեխան իւրացնում ու կապակցում է երկար ու անընդհատ վարժութիւններից յետոյ:

Ապուշ երեխաները երբէք չեն սովորում, կամ շատ թոյլ կերպով են սովորում, տպաւորութիւնները շարժապէս ապուշութեան ամենազլատուր հիմքը հէնց այստեղ է:

ԺԳ.

Ասենք մի քանի խօսք ապուշութեան մասին: Ապուշութիւնը հոգեկան խանգարումն է, որ դանդաղ բայց հետզհետէ զարգանում է:

Նայելով թէ ի՞նչ պատճառներից է առաջացել երեք տեսակ ապուշութիւն են որոշում. 1. Տեղական (էնդեմիկ), 2. բնածին և 3. ստացական. սրանցից ամեն մէկն էլ առողջապահութեան, նախազգուշացման տեսակէտով տարբեր նշանակութիւն ունին:

Տեղական (էնդեմիկ) է կոչուում այն ապուշութիւնը, որ յաճախ է պատահում, և մինչև անգամ աշխարհիս վրայ մի քանի տեղերում, օրինակ Տիրօլի խոր հովիտներում, շատ է տարածուած. սա զարգանում է կլիմայի, հողի և այլ պատճառների ազդեցութեան տակ:

Այս տեսակ ապուշութիւնը սովորաբար «կրետինիզմ» է կոչուում. իսկ հիւանդը՝ «կրետին»:

Բնածին է կոչուում այն ապուշութիւնը, որով երեխաներն աշխարհ են գալիս:

Այստեղ արդէն հիւանդութիւնը սկիզբն է առնում երեխայի արգանդային կեանքում, և նրա պատճառ կարող են լինել ժառանգական գործօններ, կենդրոնական նեարդային դրութեան զարգացման զարգումն ու այլ անկանոնութիւններ:

Ապուշութեան այս տեսակը միւսներից աւելի հետաքրքրական է, որովհետև նա մեծ մասամբ ծնողների յանցաւորութեան արդիւնք է...:

Ստացական ապուշութիւնը երեխան ստանում է ծնուելուց յետոյ՝ գլխի ուղեղին ու նրա թաղանթներին վնասող ծանր հիւանդութիւնների պատճառով (էնցեֆալիտ և մենինգիտ):

Ապուշութեան այս երեք տեսակների մէջ էլ ծանր վնասուած է լինում մարդկային հոգին—գլխի ուղեղը:

Սովորաբար զանգը վատ կազմուած կամ թերի կազմակերպուած է լինում, ինչպէս և նրա բովանդակածը (ուղեղը):

Մէկ դէպքում մեր առաջ ներկայանում են չափազանց փոքր գլխովի զլխաւորապէս զանգով, հետեւաբար և չափից դուրս փոքր ուղեղով անհատներ. այսպիսիները կոչուում են փոքրաղուէսներ (միզրոցեֆալ)—փոքր գլուխ, ցած ու տափակ ճակատով:

Միւս կողմից լինում են երեխաներ չափազանց մեծ գլխով, մեծ թէ տարիքի և թէ մարմնի միւս անդամների համեմատութեամբ. այս տեսակ

զուխները քառանկիւնի ձև են ունենում՝ հաստ ու իրար հետ լաւ միացած ոսկրներով:

Ընդհանրապէս նայելով թէ՛ ինչ աստիճան կամ որչափ է ուղեղը վնասուել, հոգեկան խանգարման աստիճաններն էլ տարբեր են լինում:

Եթէ թեթեւ է վնասուած՝ այն ժամանակ նկատուում է միմիայն խելքի կարծութիւն, կամ աւելի լաւ ասենք՝ մտաւորական գլխաւոր կարողութիւնների — բմբռնողութեան, յիշողութեան, մտքի ծննդականութեան և այլն — տկարացում:

Իսկ երբ ուղեղը աւելի է վնասուած լինում, այն ժամանակ հոգեկան գործողութիւնների խանգարման միանում է և միւս կարևոր գործողութիւնների — շարժողութեան, խօսողութեան, լսելիքի, բնաւորութեան ու բնազդի — խանգարումն:

Երեխայի յիշողութիւնը թոյլ է լինում, չի կարողանում լաւ քալել, իսկ վաղել շատ ուշ է սովորում, չի խօսում այլ թոթովում է, և այդ թոթովանքը ի վերջոյ դառնում է մի անհասկանալի պուպոց:

Բացի սրանից՝ հիւանդի մէջ երևում են եսասիրական հակումներ, անասնական բնազդումներ, պտեղաօտութիւն, անզարգացողութիւն, մարմնի զարգացման դադարում և դէմքի բնորոշ անմիտ արտայայտութիւն:

Ապուշութեան երրորդ և ամենասաստիկ աստիճանում երեխան ուրիշ բան չի ներկայացնում, բայց եթէ մի արարած, որ անասնից անզամ ստոր է կանգնած:

Մնունդ առնելու ժամանակ այդպիսի խեղճ արարածը մինչև անգամ իւր մօրը կամ սանտուին ծանաչել չէ սովորում: Նա անտարբեր է դէպի ամեն տեսակ փաղաքշանքներ, ամեն տեսակ զուարճութիւններ:

Նրա մէջ չկայ ոչ մի կենդանութիւն, դէմքի ոչ մի արտայայտութիւն. նա միշտ թմրած է, և շատ է քնում: Նա չի կարողանում մինչև իսկ թոթովել, լալ. նրա ձիջը, նրա լայր խողի խանչիւնի է նմանում: դէմքը ոչ միայն ճշմարիտ հայելի, այլ իսկական լուսանկար է նրա մտաւոր ու հոգեկան վիճակին:

Սյա երեւոյթների հետ յաճախ պատահում են նաև խլութիւն և զգայարանքների թերի զարգացում:

Սյապիսի ապուշը շատ ուշ կամ երբէք չի սովորում լաւ քալել և վազել:

Ապուշութիւնը իւր լիակատար ձևով, իւր լիակատար արտայայտութեամբ մարդկային տիպարի այլասերման ամենաորոշ տեսակներից մէկն է կազմում \*):

Սյապիսի ծայրայեղ ապուշներ սովորաբար մեռնում են կամ իրենց կեանքի առաջին տարում, կամ շատ կանուխ՝ որ և իցէ պատահական հիւանդութիւնից:

Բայց ոմանք էլ ազատուում են այդ վիճակից, ապուշ են՝ դառնալով խորին կարեկցութեան

\*) Պատրաստուում է սպագրուութեան համար. «Մ. Ս. Լ. սերում, Սիֆիլիս և Լ. քրոհոլիզմ»):

առարկայ և միանգամայն խրատական ու նախա-  
զգուշացման օրինակ:

Այսպիսի թշուառ արարածներ ծնունդ են առ-  
հասարակ այն ընտանիքներում, ուր տիրում են ի  
միջի այլոց սիֆիլիս ու ալքոհոլիզմ՝ մօր ու հօր  
մէջ.....

ԺԴ.

Մեր խօսքի կարգից մի այսպիսի ակամայ շե-  
ղումն կատարելուց յետոյ՝ դառնանք կրկին խօսե-  
լու երեխայի դատողականութեան զարգացման մա-  
սին:

Երեխաների բազմաթիւ խաղերն ու զուարճա-  
լիքները ուրիշ նպատակ չունին, բայց զարգացնել  
նրանց ձեռների, ոտների ու բոլոր մարմնի բազմա-  
տեսակ շարժումները:

Այս շարժումներից մի քանիսը միայն իբրև  
մարմնամարզութիւն կարևոր են, բայց մեծ մասը  
ոչ թէ մեքենական, այլ հոգեբանական նշանակու-  
թիւն ունին:

Նրանց նշանակութիւնը այն է, որ յիշողու-  
թիւնը մկանային ու շոշափողական զգացողութիւն-  
ները կապակցում է:

Երեխայի ձեռների ու ոտների շարժման միա-  
նում են վերջերը նաև տեսողական սպաւորու-  
թիւնները:

Մանուկը ուշադրութեամբ նայում է իւր ձեռ-  
ներին կամ ոտներին, որ այլ և այլ կողմեր է  
շարժում:

Իւր այս զբաղմունքով կամ խաղով մանուկը  
շղթայաբար կապակցում տեսողական, շոշափողա-  
կան ու մկանային զգայութիւնները:

Եթէ երեխայի խաղերի խորը մտնենք կամ  
նրանց հետեւենք, կարող ենք հասկանալ նրա մտաւո-  
րական ջանքերի ներքին խորհուրդը, և միանգամայն  
զարմանալ նրա անխոնջ ու լուրջ զբաղմունքի վրայ:

Երեխան երբեմն ճակատը կնձռոտում է՝ նշան  
է թէ մի բան չի հասկանում, ուրիշ անգամ ժրպ-  
տում է, նշանակում է հասկացել է, կամ մի նոր  
զիւտ է արել:

Արդէն հինգերորդ—վեցերորդ ամսում կարելի  
է նկատել, թէ ինչպէս երեխան լարուած ուշա-  
դրութեամբ հետեւում է իւր ձեռների շարժման:

Բոլոր մանր աշխատութիւնները, ինչպէս և  
զրելը, կատարում են աչքի առաջնորդութեամբ:

Աչքի կրթիչ ազդեցութեան շնորհիւ ամենա-  
կոպիտ ձեռքն անգամ դառնում է ամենանուրբ  
զործիք:

Ձեռքը ուղեղի հետ միացած է հարիւր քսան  
հազար նեարդային թելերով. նեարդերի այս ահա-  
զին քանակութիւնը ձեռքի շարժումներին տալիս  
է ձկունութիւն, նրբութիւն ու թեթեւութիւն:

Վեցերորդ—եօթներորդ ամսում մանուկը զի-  
մացը գտնուած իրերը արդէն լաւ է բռնում, միայն  
կարող չէ ցոյց տալ այն առարկան, որի վրայ որ  
նայում է. մատով կարող է ցոյց տալ եօթներորդ  
կամ ութերորդ ամսի վերջում:

Սյսպէս ուրեմն՝ աչքի առաջնորդութեամբ վարժուած ձեռքը նշանաւոր գործ է կատարում:

Մանուկի ամենասիրած զբաղմունքներից մէկն է ձեռքով ու ոտքով ջրի մէջ խաղալը, ջուր բռնելը և այլն:

Կարծր ու հեղուկ մարմինները՝ իբրև իրարեց խիստ զանազանուող իրեր, երեխան աւելի շուտ է որոշում: փափուկ մարմինները, ինչպէս՝ բամբակն ու թուղթը, երեխային շատ օտարօտի (կուրեօզ) ու զուարճալի են թւում. իսկ մածուցիկ ու կպչուն նիւթերը՝ վտանգաւոր ու հանելուկ:

ԺԵ.

Մանուկի միւս հաճելի զուարճութիւնն է տոտիկներով խաղալը: Երեխան իւր ոտքը տեսնելիս աշխատում է բռնել ու բերանը տանել:

Սյս գէպքում երեխան շոշափում է ձեռքով ու շրթունքներով իւր ոտքը, և առաջին անգամ իմանում է այն անսպասելի իրողութիւնը, թէ իրեն կողմնակի առարկայ կարծուածը (ոտքը) տալիս է նոյնպիսի շոշափողական զգայութիւններ, ինչ որ նա սովոր էր իւր ձեռքից ու շրթունքներից ստանալ:

Ճանաչելով իւր ոտքը ոչ միայն իբրև տեսանելի ու շոշափելի առարկայ, այլ և իբրև զգացող իր, մանուկը անցնում է ուսումնասիրելու մարմնի այն մասերը, որոնք տեսանելի չեն. այսինքն՝ աչքն ու սկանջը:

Հայելու միջոցով մարմնի անտեսանելի մասերը տեսանելի են դառնում, և մանուկի՝ ինչպէս և կենդանիների համար հայելին մի մեծ առեղծուած է երևում, և ամենահետաքրքրաշարժ երևոյթ:

Հայելին ամենակրթիչ խաղալիքներից մէկն է:

Տեղն է մի քանի խօսք ասել խաղալիքների մասին:

Ուղեղի նման, որ մտածողութեան միակ ու իսկական գործին է, մի կարևոր օրգան մարդէլու անհրաժեշտ պէտքը, մեզ հասկանալի կարող է դարձնել այն զարմանալի յափշտակութիւնը, որով երեխաները յանձնուում են խաղերի. նրանց բոլոր խաղերը ուրիշ բան չեն, բայց եթէ ոչ մտածողութեան նմոյշներ:

Խաղերով երեխան մտածել է սովորում, այսինքն՝ իբրև անբաժան ամբողջութիւն կապել ու միացնել հոգեկան բազմատեսակ գործողութիւնները մտքի մի անընդհատ հոսանքի մէջ:

Օրէցօր այս հոսանքը առաւել լայն ու աւելի յաղթ է դառնում:

Աւելի լաւ է ոտք էլած երեխային խաղելու համար տալ ռետինէ զնդակ կամ կենդանիներ:

Ամենալաւ խաղալիքները ռետինից շինած կենդանիներն են, բայց ոչ թէ առիւծ, վագր ու սրանց նման գաղաններ, այլ այնպիսիները, որ երեխան իւր շուրջը, բակում, պարտէզում իրապէս, կենդանի կերպով տեսնում է. օրինակ՝ կատու, ձի, շուն, այծ, թռչուն և այլն:

Սյս տեսակ կենդանիներն ու թռչունները երեխային ձանձրութիւն չեն պատճառում, մասնա-

անդ որ միանգամից պէտք չէ բոլոր խաղալիքները տալ, այլ մաս-մաս, այս փոփոխութիւնը մեծապէս հաճելի կ'լինի մանուկին:

Որովհետև այսպիսի անասունների հետ խաղալիս երեխան ընդհանրապէս նստած է լինում, ուստի փոփոխութեան համար անհրաժեշտ է ուտինէ գնդակ ունենալ:

Յիշելու կարողութեան մարզումը (յիշողութիւնը՝ ստացուած տպաւորութեան հետքն է, որ կարելի է վերանորոգել ու կենդանացնել) զարգացող մանուկի հոգու ամենամեծ պահանջներից մէկն է:

Սյս նպատակին հասնելու համար կարևոր է, որ միևնոյն տպաւորութիւնը շատ ու շատ անգամ կրկնուի:

Մեծ կարեկցութեան արժանի են տկարամիտ ու ապուշ երեխաները, որոնք թէև օրեր ու ամիսներ իրանց աչքի առաջ շարժում են իրենց ձեռները, բայց հէնց որ շարժումը դադարում է, խկոյն և եթ նրանց մտքից չքանում է և տպաւորութիւնը, և անհրաժեշտ է նոյն աշխատութիւնը անվերջ անգամ կրկնել ու կրկնել:

Բայց բոլորովին առողջ երեխանների էլ պատկերացնելու և յիշելու կարողութիւնը այնքան թոյլ է լինում, որ նոյնը զօրացնելու համար անհրաժեշտ պէտք կայ շարունակ մարզումներ անելու:

Սյսպէս ուրեմն՝ երեխայի կեանքի մէջ, չորրորդ ամսից սկսած մինչև տասներորդ ամիսը, հոգևոր զարգացման ամենանշանաւոր իրողութիւնը

յիշողութեան զարգացումն է, ուրիշ խօսքով՝ մտաւորական գործողութիւնների զարգացումը:

Մտաւորական զարգացման համընթաց առաջ է դնում նաև երեխայի անձնաւորութեան—զգացականութեան ու կամքի—զարգացումը:

Սուելի պարզելու համար՝ բացատրենք այս ուրիշ խօսքերով:

Երեխայի ծիծ ուտելուն մէջ արդէն միանում են այնպիսի պայմաններ, որ նպաստում են մտքի, զգացման ու կամքի միաժամանակ զարգացման:

Կերակուր ուտելիս՝ երեխան բոլոր զգայարանքներից միաժամանակ տպաւորութիւն է ստանում:

Կաթ կուլ տալով՝ մանուկը ստանում է համի ու հոտի հաճոյական զգայութիւններ:

Սյս տպաւորութիւններին միանում են նոյնպէս լսողական զգայութիւններ, որ մանուկը ստանում է ծնօտի մկանունքների առաջացրած ձայնից. վերջապէս տեսողական զգայութիւններն, որովհետև ծիծ ուտող մանուկի աչքը միշտ մօր վրայ է լինում:

Սյն աշխատանքը, որ մանուկը գործ է դնում ծիծ ուտելիս, արդէն շատ վաղ հասկացնում է նրան հաճ+ի ոյժի նշանակութիւնը՝ որով քաղցին ու ծարաւին յաջողութեամբ կարելի է բաւականութիւն տալ:

Սյսպէս է բնութեան օրէնքը, այսպէս են կատարւում ամենանշանաւոր իրողութիւնները մանուկի առաջին կեանքում:

ԺԶ.

Առաջին տարուայ վերջը և երկրորդի սկիզբը՝ զարգանում է մարդուս մտաւորական ամենաբարձր կարողութիւններէից մէկը, այն է՝ խօսելու ընդունակութիւնը:

Խօսելու կարողութիւնը զետեղուած է մի առանձին կեդրոնում, որ մօտ յիսուն տարի առաջ գտաւ Բռոկա գիտնականը, և որը մնացեալ բոլոր կեդրոնների մէջ միջին տեղն է բռնում:

Խօսողութիւնը, մտածողութեան նման մեծ նշանակութիւն ունի ինչպէս մեծահասակների, այնպէս էլ մանուկների մտաւոր զարգացման մէջ:

Երբ երեխայի մտածումները և առհասարակ մտաւորական գործողութիւնները պայծառ ու որոշ են դառնում, երբ ընդհանուր մտապատկերներ երեխայի մտքի մէջ զիջւում են, երբ յիշողութիւնը զօրացած է լինում, այն ժամանակ արդէն «խօսքի» պահանջ է զգացւում:

Ուրիշ խօսքերով ասենք, խօսելու ընդունակութեան զարգացումը սկսում է այն ժամանակ, երբ երեխան մտաւորապէս քիչ-շատ զարգացած է, երբ նրա կամքը որոշ չափով զօրացած է:

Այս տեսակէտով՝ խօսելու ընդունակութեան զարգացումը կարող է քիչ-շատ ուշանալ:

Առողջ երեխաները խօսել են սկսում երկրորդ տարուայ սկիզբը, և յատկապէս՝ աղջիկները երկրորդ տարուայ առաջին քառորդում, իսկ մանչերը՝ երկրորդ մասում:

Իսկ երբ մտաւորական զարգացումը դանդաղ է առաջ դնում, խօսելու ընդունակութիւնն էլ զարգանում է կամ երկրորդ տարուայ վերջին և կամ երրորդի մէջ. այս արդէն հիւանդութիւն է, և պէտք է բժշկի դիմել:

Երբ ամեն բան կարգին է, երեխան աւելի շուտ խօսել է սովորում քան թէ քալել:

Անասունները պայծառ մտքեր չունին, կամ շատ քիչ ունին, այս իսկ պատճառով խօսելու կարողութիւնից էլ զրկուած են:

Սպուռութեան ծանր տեսակներում՝ խօսողութիւնից էլ զրկուած է լինում երեխան:

Եւ այսպիսին ոչ միայն չի խօսում, այլ և կարիք էլ չի զգում խօսելու:

Սկզբում, այսինքն՝ չորրորդ—վեցերորդ ամիսներում, երեխան երկար ու ձիգ ձայներ է հանում: Իսկ տասներորդ ամսից յետոյ՝ նա բազմատեսակ բայց ոչ բոլորովին որոշ յօդաւոր հնչիւններ է արձակում. օրինակ՝ թի, մա և այլն:

Այս ժամանակից սկսած՝ մանուկը սկսում է մեծերի խօսքին ականջ դնել, և մի-երկու ամսուայ մէջ շուտով հասկանում է լսած խօսքերի նշանակութիւնը, այսինքն՝ բառի հնչիւնը կապում (զուգորդում) է նրա նշանակութեան հետ:

Առաջին տարուայ վերջը տղայք ընդհանրապէս հասկանում են շատ բառերի նշանակութիւն, և մեծ մասամբ այն, ինչ որ մեծերն են խօսում. սակայն այս ժամանակ երեխան կարող չէ և ոչ մի բառ արտասանել:

Այս ժամանակ մանուկը, ասում է Սիկորսկին, գտնուում է ճիշտ մի այնպիսի վիճակի մէջ, ինչ վիճակի մէջ որ գտնուում է դաշնամուրի վերայ շուտ-գող մէկը, որ լսում է միայն ծանօթ եղանակներ:

Չնայելով մեծամեծ դժուարութիւններին՝ մանուկը վերջապէս խօսելու բարդ կարողութեան տիրանում է, որ մնածողութեան նման մարդուս բնորոշ յատկութիւնն է կազմում անասունների համեմատութեամբ:

Մարդիկ աւելի սակաւ են զանազանում իրարից քալելու, վազելու կարողութեամբ, քան թէ մտածելու և խօսելու ընդունակութեամբ:

Խօսել սովորեցնելու մէջ վարժութիւնների մեծ նշանակութիւնը աւելի պարզ կլինի, երբ ասենք որ բառերը յիշողութեան մէջ լիապէս հաստատելու համար պահանջուում է տասնամեայ վարժութիւն:

Եւ յերաւի՝ մինչև տասնամեայ հասակը պատահմամբ խլացող երեխաները կամոց-կամոց խօսել մոռանում են ու համբ են դառնում. այն ինչ նրանք, որ աւելի ուշ են խլանում, խօսել չեն մոռանում:

Խօսել սովորելը հեշտացնելու համար անհրաժեշտ է, որ մանուկը լսի միշտ հանդարտ, որոշ ու հասկանալի բառեր:

Երեխաները կարելին չափ հեռու պիտի մնան մեծերի սովորական արագ խօսակցութիւնից:

Այսպիսի զգուշութիւնների միջոցով երեխաների մէջ գեղեցիկ խօսելու շնորհք կզարգացնենք:

Հանրածանօթ է, որ հին Յունաստանում մտածելու և խօսելու արուեստը ճշմարիտ գեղարուեստական կատարելութեան էր հասցրած:

Թէ.

Մանուկի հոգևոր կեանքի բոլոր կողմերը՝ խօսելու կարողութեան զարգացումն էլ հաշուելով՝ մինչև վեց տարեկան հասակը համաչափ զարգանում են:

Այս հասակի տղայք՝ իրենց քալելու և խօսելու կարողութեան շնորհիւ կարող են իրենք իրենց ժամանակ անցնել, ուստի և մեծերի հսկողութիւններից քիչ-շատ խոյս տալ:

Թէև խօսելու կարողութեան զարգացման շնորհիւ՝ երեխայի հոգեկան բոլոր նշանաւոր ընդունակութիւնները երևում են, բայց նրանց զործունէութիւնը դեռ լիակատար չէ:

Այս իսկ պատճառով մանուկներին պատշաճում են՝ երեխայութիւն, անհասկացողութիւն, անմեղութիւն, պարզմտութիւն և այլ այսպիսի յատկութիւններ, և սրա համար էլ անհրաժեշտ ու կարևոր է մեծերի բազմակողմանի խնամքն ու հսկողութիւնը:

Մինչև եօթնամեայ հասակը աստիճանաբար ու կարգով ամեն կողմից զարգանում են երեխայի միտքը, կամքն ու զգացումը, ուրիշ խօսքով՝ կազմակերպւում է մարդկային մի ամբողջական անձնաւորութիւն:

Սյս ժամանակ միայն կարելի կլինի խօսել այս նորակերտ ուժի բնութեան, ինչպէս և նրա հաւանական ձիրքերի մասին:

Որովհետեւ մարդկային կեանքի արժէքը կախումն ունի հոգեկան բոլոր կողմերի քիչ-շատ ներգաշնակ հապակցութիւնից, ուստի և մանուկի այս շրջանում հոգեւոր զարգացման կանոնաւորութիւնը խիստ մեծ նշանակութիւն ունի նրա ապագայ բոլոր կեանքի վերաբերմամբ:

Մնկարգ բնաւորութիւններն իրենց գոյութիւնը առաւելապէս այս շրջանին են պատկանում:

ԺԸ.

Հանրաճանօթ է, որ տղոց զգացողութիւնը խիստ զօրաւոր է լինում:

Սյս երեղյթի ամենազլխաւոր պատճառը այն է, որ գլխի մեծ ուղեղի զարգացումը աւարտուած չի լինում, ուրիշ խօսքով՝ տղոց զգացողութեան զօրեղութիւնը կարելի է բացատրել մասամբ նեարդերի զրգուումով:

Ժամանակ անցնելուց յետոյ նեարդերի զրգուականութիւնը—բարկութիւն, արցունք, երկիւղ—հետզհետէ թուլանում է, և նրա տեղ բռնում է մտքի գործունէութիւնը:

Որքան մանուկը փոքր է, այնքան էլ զգացողութիւնը ուժով է, իսկ ուշադրութիւնն ու մտածելու կարողութիւնը՝ թոյլ ու անհաստատ:

Մանուկների զգացողութեան ամենաբնորոշ գիծն է՝ անհաստատութիւն ու թուլութիւն:

Երեխաների զգացողութեան թուլութիւնը այն է, որ նրանք շատ շուտով են մոռանում, ինչ որ կրել են, և շատ հեշտութեամբ հոգեկան մի վիճակից միւսին են անցնում:

Վախ, բարկութիւն, նախանձ շատ վաղ են երևում տղոց մէջ, դոնէ մէկ ու կէս տարեկան հասակից:

Նրանց վախը շատ բնորոշ է, և բոլորովին անսպասելի կերպով երևում է երբ կատու, հաւ և այլն են տեսնում:

Երեխայք նախանձ արտայայտում են այն ժամանակ, երբ տեսնում են որ մէկը մի ուրիշին փաղաքշում, փայփայտում է:

Սյս զգացումները—երկիւղ, նախանձ, բարկութիւն—ընդհանուր են թէ՛ մարդոց և թէ՛ կենդանիներին, այս իսկ պատճառով շատ բնական է, որ նրանք վաղ են արտայայտուում:

Ի դէպ՝ վախի մասին մի քանի խօսք ևս: Երեք տարեկան փոքրիկ Աւետիսը՝ պաղ ջուր բերելու համար անվախ զնում էր՝ մինչև անդամ մութ ժամանակը, նկուղ, որ գտնուում էր պարտեղի ծայրին:

Մէկ օր երեկոյեան, ժամը եօթի ժամանակները, տանը եղած հիւրերից մէկը խմելու պաղ ջուր ուղեց:

Մայրը իւր փոքրիկին ուղարկեց ըստ սովորութեան ջուր բերելու:

Միթէ այս փոքրիկը չե՞ վախենում այսպիսի մթին նկուղ իջնել, հարցրեց հիւրը:

Փոքրիկ Աւետիսը այս խօսքերը լսելուց յետոյ գնաց մինչև նկուղի դուռը, բայց վախեցաւ ներս մտնել՝ ինչպէս որ միշտ սիրով ու անվախ անում էր, և յետ դարձաւ առանց ջրի ասելով. «ես վախենում եմ նկուղ երթար»:

Աւելորդ է ասել, որ վատ ու անկանոն դաստիարակութիւնը մեծապէս զարգացնում է երկիւղի զգացումը:

Ամօթղածութիւնը՝ միմիայն մարդոց յատուկ այս զգացումը, երրորդ տարուց առաջ չի զարգանում:

Ամօթղածութեան (այն էլ խելացի) յաջողակէս կարելի է վարժեցնել մանուկներին միմիայն օրինակով և ոչ խօսքով:

Ամօթի զգացման կանուխ զարգացման կարելի է նպաստել այն ժամանակ միայն, երբ մեծերը երեխաների առաջ ամէն տեսակ զգուշութիւն են պահպանում իրենց զգեստի վերաբերմամբ, և առհասարակ կատարում են այն ամենը, ինչ որ ամօթի զգացումն է պահանջում:

Յանցաւորութեան զգացումը հողերանօրէն սերտ կապուած է ամօթղածութեան հետ:

Սյս զգացումը կենդանիներից միմիայն շունը ունի՝ իբրև որոշ ու պայծառ արտայայտուած հոգեկան վիճակ:

Յայտնի է, որ եթէ անբաւականութիւն ցոյց տրուի վարժուած շան, կամ եթէ տէրը յոնքերը

կիտէ, իսկոյն նա զլուխը պոչն ու ականջը կախ է ձգում, և յայտնի յանցաւորի կամ ներուժն խնդրող անձի կերպարանք է ստանում:

Փաղաքշանքը հեռացնում է այս զգացումը շան վրայից և նա իւր նախկին վիճակն է ստանում:

Երկիւղածութեան զգացումը, ասում է Կառլէյ, բարոյական զարգացման ամենատեսական հիմունքներից մէկն է կազմում:

Եւ այս զգացմունքը կարելի է շատ կանուխ զարգացնել երեխաների մէջ:

Ունենալով երեխայի հետ լուրջ ու ազնուական վարմունք՝ ծայրայեղ զգացականութիւնից ու անտեղի փաղաքշանքներից ազատ՝ կարելի է զարթեցնել նրա մէջ համանման զգացմունք միեւնոյն բնաւորութեամբ:

Տղայք շատ կանուխ են ցոյց տալին հասկացողութիւն բարձրագոյն զգացմունքների վերաբերմամբ, որոնց որ ականատես են լինում:

Անշուշտ՝ տղսց մէջ բարձրագոյն զգացմունքներ — համբերողութիւն, հեղութիւն անյիշաչարութիւն, վեհանձնութիւն և այլն — հաստատելու ամենաստոյգ ճանապարհը՝ մեծերի օրինակը կարող է լինել. քարոզներն ու բարոյական խրատները ոչինչ չեն ազդի:

Խրատներով երեխային կարելի է ռեզոնիւն դարձնել, այսինքն՝ մտքով ստան դատողութեամբ ընդունել տալ նրան զգացմունքները, այլ ոչ թէ նոյնը հաստատել նրա սրտի մէջ:

Աւելի շատ սիրտը կրթեցէք, քան թէ միտքը զարգացրէք:

Ամօթղածութեան զգացման ուշ արտայայտուելը, երկիւղի ու բարկութեան չափազանց զարգացումը՝ սովորաբար երևում է հիւանդ, բթամիտ ու ապուշ երեխաների վրայ:

Կամքը զօրացնել ու զարգացնել՝ ահա այս չարիքի դէմ կռուելու ամենալաւ միջոցը:

Պէտք է ուշք դարձնել անմեղ հոգու և այս կողմի վրայ:

Հէնց ուշադրութեան թուլութիւնն է պատճառը, որ երեխան տեսնում է, բայց չի նկատում: Թիթէ պակաս են չափահասներ, որոնք նայում են, բայց չեն տեսնում:

ԺԹ.

Մեր այս քննած շրջանում՝ մանուկի կամքը բոլորովին թոյլ է լինում:

Սյս թուլութիւնը նախ և առաջ երևում է անով, որ երեխան չի կարողանում զսպել արտասունքը, ծիծաղը, չարութիւնները, բարկութիւնը, շփոթութիւնը, և մանուկն չի կարողանում մէզը բռնել երկու և երբեմն նաև երեք տարեկան հասակում:

Վերջին պարագան կարող է մի չափ համարել՝ մանկական կամքի զարգացումն իմանալու համար:

Լաւ նշան է, եթէ երեխան վաղ հասակից մաքրասիրութիւն է ցոյց տալիս ամեն բանի մէջ:

ընդհակառակը՝ աղտեղասիրութիւնն ու անկարգութիւնը կամքի թուլութեան նշան են:

Սյնախի երեխաներ, որոնց սովոր ենք նեարդային կոչել, այսինքն այնպիսիները՝ որոնք ոչ մի բանի մէջ չեն կարողանում իրանց զսպել՝ երկար ժամանակ՝ մինչև երեք-չորս տարեկան հասակներն իսկ անմաքուր են մնում ցերեկներն անգամ:

Մանուկի կամքի թուլութեան պարզ արտայայտութիւն կարող է համարուել այն, որ նա անտրտունջ ու անպայման կերպով հնազանդում է չափահասների վճռական հրամաններին:

Եթէ երեխային կերած ժամանակը վճռական բայց հանդարտ ու սիրով ասես՝ դու այլևս ուտել չես ուզում, նա իսկոյն դգայլ վար կ'ընի և ուտելուց կզդարի (Պոէեռ):

Եթէ մեծահասակները քիչ-շատ վարպետ գտնուին՝ կարող են մանուկների կամքի վրայ լիապէս իշխել:

Երեխայի կամքի յաջող զարգացման նշան կարող են համարուել ձեռքի ծարպիկ շարժումները, ազատ խօսելը, կանոնաւոր քալուածքը և զարգացած ուշադրութիւնը:

Անպաշարք, ցրուած, թփփովախօս մանուկը ցոյց է տալիս, թէ իւր կամքը շատ թոյլ է զարգացած:

Ապուշ երեխաները անպաշարք ու «փասփաս» են լինում:

Երեխայի հանդարտութիւնը, ինքն իրան զուպելը, ծանր բայց ճշտութեամբ կատարած շար-

ժողովներն ամենալաւ կերպով ցոյց են տալիս, թէ կամքը յաջող զարգանում է:

Այն երեխաները, որ հանդարտ են և միշտ որեւիցէ բանով զբաղուած՝ աւելի շատ բան են խոստանում, քան թէ աշխոյժ, չարածճի ու անհանգիստ տղայք:

Տղոց մտքի ու կամքի զարգացումն ապահովելու ամենալաւ միջոցներից մէկն էլ՝ սննդից \*) զատ, մաքուր օդն է:

Այն տղայքը՝ որ մաքուր օդի մէջ քիչ են քնում, մտաւորական ու կամքի զարգացման մէջ միշտ դանդաղում են:

Օդի թթուածինը ուղեղի ամենակարեւոր սնունդն է. այս կերակրի պակասութիւնը մարդոց ու տղոց տխուր ու մուսյլ, դժգոհ ու դիւրագրգիռ է դարձնում:

Ուղեղի համար ամենավտանգաւոր սովը — թթուածինի սոճն է:

Գալով այն բարոյական միջոցներին՝ որոնք մտքի ու կամքի զարգացման նպաստում են, պէտք է ասենք, թէ մեծ նշանակութիւն ունի, որքան կարելի է, ազատութիւն տալ մանուկին խաղի ու շարժումների մէջ:

Ինքն իւր գլխին խաղալը զարգացնում է մանուկի միտքը, իսկ շարժումները կամքն են զօրացնում:

\*) Տես իմ գրք. «Մարմնամարդութիւն» և «Նուէր նորասի կանանց»:

Մօր կամ նայողի մշտական խնամակալութիւնը մի մեծ չարիք է:

Մայրը իւր աշխատանքը ձեռքին պէտք է նստի ու հսկէ երեխային, այլ ոչ թէ միշտ հեռը լինի ու խաղայ:

Այն նայողները, որոնք շուքի նման երեխայից չեն հեռանում և նրանց ամեն մէկ շարժումներին ու քայլին խառնուում են, կարելի է ասել չգիտեն իրենց պարտականութիւնը ճիշտ կատարել \*):

Ահա այսպիսի պայմաններում միայն կամքի և ուշադրութեան լիակատար զարգացման հիմքն է դրուում:

Այս՝ արդէն իսկ մտաւորական յառաջադիմութեան մի գրաւական է, և նոյն իսկ կանոնաւոր մտածողութեան:

Ի.

Երեխայի գլուխը աճում ու մեծանում է երկու ժամանակամիջոցում կամ շրջանում:

Առաջին շրջանում, այն է, ծնուելուց մինչև եօթնամեայ հասակը, գլուխը շատ արագ է մեծանում: Իսկ եօթ տարեկանից սկսած մինչև պատանեկութիւն՝ գլուխը գրեթէ չի մեծանում:

Ապա ուրեմն՝ երկրորդ մանկութեան կամ պատանեկութեան հասակը ոտք կոխելիս՝ մանուկը, արդէն կատարելապէս զարգացած ուղեղ է ունենում, և նրան քնում է՝ այնուհետև այս գործին

\*) Տես իմ գրք. «Մեր նեարդերը»:

համապատասխան աշխատանքով ու գործունէութեամբ մարզէր:

Պատանեկութեան շրջանը մտնելիս՝ մատաղ էակը ցոյց է տալիս հոգու հիմնական բոլոր կարողութիւնները—զգացմունք, ուշադրութիւն, կամաւոր ուշադրութեան ընդունակութիւն, յիշողութեան ու կամեցողութեան պէս-պէս տեսակները:

Ճշմարիտ է այս ընդունակութիւններից մի քանիսը թոյլ են զարգացած, միւսները աւելի լաւ, բայց ամեն ինչ ընդհանրապէս որոշ չափով մատչելի է մանուկին:

Եւ այս հասակից ահա սովորաբար սկսում են սիստեմատիկ ուսուցումը, և երեխաներին այս կամ այն գործի համար բարոյական պատասխանատուութեան ենթարկում:

Սյս հասակում կամքը համեմատաբար թոյլ է, և այս իսկ պատճառով աշխատանքի մէջ մանուկները կարող չեն պնդութիւն, հաստատութիւն ցոյց տայ, և մտքի յոգնածութիւն իսկոյն երեւում է, երբ մանաւանդ աշխատանքը միակերպ է և զբաղմունքները ոչ-իրազննական:

Սյս հասակում երեխաները կամաւորապէս կամ ակամայ ենթարկւում են ուրիշների ազդեցութեան, և մինչև անգամ երբեմն շատ կամ սակաւ հաւանականութեամբ, կարելի է որոշել ապագայ քաղաքացու բնաւորութիւնը:

Սյսպէս է լինում մերձաւորապէս մինչև տասներկու տարեկան հասակը:

Տասներկուսից մինչև տասն և հինգ տարեկան

հասակը՝ երեխայի կամքը զօրեղանում է, աշխատելու մէջ նա աւելի տոկոսն է լինում, և միանգամայն մարմնի աճեցումն ու ֆիզիքական զարգացումը զօրանում:

Միտքը աւելի ընդունակ է դառնում մանրակրկիտ աշխատանքի, այլ ոչ գնահատելու, քննադատելու, և ընդհանրապէս դադափարները հանրացնելու:

Սյս հասակում նկատելի է հոգեկան կեանքի տիպարական միակողմանիութիւն. երեւում է ձրգտումն անմիտ, երեխայական դիւցազնութեան, հակումն առասպելական քաջագործութիւնների, օրի-նակ՝ տնից փախչել երթալ հեռաւոր երկիրներ՝ զրպանում ունենալով մի քանի կոպէկ, և անպատճառ զմելին, իսկ ոտներին՝ բարձրակրունկ որսորդական կոշիկներ:

Ո՛րքան զրաւիչ է այս, բայց միանգամայն վսեմ ու ծիծաղելի:

Երիտասարդութիւնը սկսում է տասն և հինգ տարեկանի մօտերքը. տասն և ութ—քսան տարեկան հասակում մանուկը դառնում է հասուն երիտասարդ, և ապա մտնում է հասուն հասակը:

Ո՛հ երիտասարդութիւն, երիտասարդութիւն. քո մէջ է և՛ անկեղծութիւն և իդէալական մտք-բույրութիւն, ոգու անկախութիւն ու համարձակութիւն:

Քո մէջ է արտայայտւում ձգտումն դէպի վսեմ գործեր, դիւցազնական քաջագործութիւններ, մաքառումն չարիքի դէմ և նուիրումն հասարակական

ճառայութեան. ճշմարիտ երիտասարդութիւնը յոյսերով է ապրում, նուիրուած է ամբողջապէս ապագային....

Երիտասարդութիւնը կարճ է, նա շուտ է անցնում և նորան վերադարձնել կարելի չէ....:

Մեր շուրջը բազմաթիւ վտանգներ կան. չմոռանանք գլխաւորապէս հիւանդութիւնները, ժառանգականութիւնը, այսինքն՝ ուղղակի կամ անուղղակի տրամադրող մոմենտները, անկանոն դաստիարակութիւնը, վատ շրջանը, սեռական անդամների հիւանդութիւնները, ընկերական-տնտեսական պայմանները և այլն, մի խօսքով շատ փորձանքներ:

Ով որ երիտասարդութեան հասակում սակաւ է մարզել իւր մտաւորական կարողութիւնները, այնպիսին հեշտութեամբ է ընկնում վաղաժամ ծերութեան մէջ. այս պատճառով է որ հասարակային ու բարոյական իդէալները ընկնում են, կոպիտ գործնական կեանքը իշխում է հասուն ու աւագ սերնդի մէջ, իսկ դատարկութիւնը՝ երիտասարդական կեանքի մէջ:

Առաւելապէս կանայք՝ քան թէ տղամարդիկ, կարողանում են քիչ-շատ և երբեմն էլ ընդ միշտ իդէալական մնալ, այն էլ իրանց զգացմունքների առաւել կատարեալ զարգացման շնորհիւ. բայց այս էլ զեռ այնքան հաստատ որոշուած չէ:

Քառասուն կամ քառասուն հինգ տարեկան հասակից սկսած մարմնի Ֆիզիքական կեանքը հետզհետէ ընկնում է, բոլոր գործարանների մեծութիւնն ու չափը նուազում է. բայց մեծ մարդոց

ուղեղը բարոյական ու մտաւոր մշտական ջանքի շնորհիւ անփոփոխ է մնում, այսպէս ասենք, ժամանակի ձեռքը նրանց չի շոշափում (հ. Ղ. Ալիշան, Գլադատոն, Վիրիսով և այլն):

Այս վիճակին կարելի է հասնել ինչպէս մեծ մարդոց կեանքն է ցոյց տալիս, միմիայն անընդհատ կատարելագործելով մեր բարոյական ոյժերը: Տեղն է յիշել Փրանսիական իմաստալից առածը. «Եթէ զիտենար երիտասարդութիւնը, եթէ կարողանար ծերութիւնը»:

Այս ճանապարհով հրաշալի են դառնում այն իդէալական զգացմունքները, այն անշահասիրական սերը դէպի մարդիկ, որոնցով լին է ոմանց ծերութիւնը:

Այսպիսի զգացմունքներ ունեցողը տարբերութիւն չի դնում օտարի ու իւրայինի մէջ, հարգատի ու հեռաւորի մէջ:

Այսպիսի բնական ընթացք է ցոյց տալիս՝ հատակի համեմատ՝ հոգեկան կեանքի զարգացումը....:

Այժմ փոքր ի շատէ մանրամասն խօսենք մի քանի շեղումների, մանկական հոգու ընդհանուր հիւանդական վիճակների մասին:

ԻԱ.

Այս բոլոր դատողութիւնները պարզ ցոյց են տալիս, թէ մեր հոգին սերտ կապուած է մեր մարմնի հետ, և թէ հոգու «աթոռանիստը» ուղեղն է:

Գիտութիւնը այս ճշմարտութեան հասել է անմիջական ու անհերքելի փորձերով ու դիտողութիւններով:

Բնախօսի, բժշկի տեսակէտից հոգի ասելով  
ուրիշ բան պէտք չէ հասկանալ բայց եթէ ուղեղի  
գորշ նիւթի գործունէութիւնը:

Թէ այս խնդրի վերաբերմամբ ինչ է ասում  
և ուսուցանում եկեղեցին, այդ մենք կտեսնենք մի  
ուրիշ տեղ \*):

Այժմ այսքանը ասենք, որ եկեղեցին տալիս է  
մեզ կենցաղական կանոններ. պահեցողութիւն, ժուժ-  
կալութիւն, կերակրի խորութիւն— այս ամենը  
բժշկական խորհուրդներ են:

Բժշկականութիւնը՝ խնդրին աւելի խորամուխ  
լինելով, այս կանոնները միայն կերպարանափո-  
խում, յարմարեցնում է գիտութեան ու ժամանակի  
պահանջներին:

Այսպէս ուրեքն՝ հոգին ծնում, աճում ու կա-  
տարելագործւում է ուղեղի աճման ու կատարելա-  
գործման համեմատ:

Մեր յիշելու, մեր մտածելու կարողութիւնը,  
մեր կամքը մեծ կախումն ունի ուղեղի վիճակից.  
ուղեղի առողջ զարգացման մէջ առաջ եկած ամեն  
մի չնչին խտորմունք իսկոյն և եթ ազդում է մեր  
հոգու վրայ, և ցոյց է տալիս թէ իւր և իւր օթե-  
ւանի, այսինքն՝ ուղեղի միջև եղած կապը խզուել է:

Կաւ իմացիր ու յիշեր, որ հոգեկան հիւան-  
դութեան անշուշտ կյաղթես, եթէ միայն հասկա-  
նաս թէ ուղեղի որ մասի խանգարման է համա-

\*) Պատրաստում եմ տպագրութեան համար «Մտող-  
ջապահական քարոզներ»:

պատասխանում այդ հիւանդութիւնը, և թէ այդ  
խանգարումը ինչպէս կարելի է ուղղել:

Հոգի նորոգելը ուղեղ նորոգել է:

Մենք արդէն ասել ենք, որ բոլոր զգայու-  
թիւնները ուղեղին են հաղորդւում. այստեղ նրանք  
խորհրդաբար պահպանում, տպաւորում են ինչ-  
պէս պատկերը լուսանկարչական թերթի վրայ. և  
այս տեղից կրկին անգամ կարող են նրանք առաջ  
բերուել հոգեկան կեանքի այն գործողութեան մի-  
ջոցով, որ յիշողութիւն է կոչւում:

Առանձին-առանձին տպաւորութիւնները այն-  
տեղ միանում, բաղդատւում, վերլուծւում են. նրանք  
կազմում են բարդ մտապատկերներ պարզ ու հան-  
րական գաղափարներ:

Ինչ կերպ էլ պատկերացնենք հոգին, թէ կուզ իբրև  
անկախ, աննիւթական գոյացութիւն, այնու ամե-  
նայնիւ նա շատ սերտ կապուած է մեր ուղեղի  
հետ, և նրա գործունէութիւնը ամենևին կարելի  
չէ բաժանել ու զատել ուղեղի գործունէութիւնից:

Ճանաչողութիւն, յիշողութիւն, դատելու կա-  
րողութիւն— այս բոլորը անխզելի կերպով կապ-  
ւած են ուղեղի հետ, և ուղղակի կախումն ունին  
վերջինիս յատկութիւնից ու նրա այս կամ այն  
ժամանակի վիճակից:

Որչափ որ առողջ ու կենսունակ են ուղեղի  
բջիջները, որչափ որ երկար են պահպանում  
տպաւորութիւնները, որքան որ բաղմատե-  
սակ ու իմաստալից են տպաւորութիւնների

միացումները, այնչափ էլ հարուստ է լինում որևէ անձի հոգևոր դանձարանք:

Որպէս զի հոգին առողջ լինի, պէտք է որ առողջ լինի նաև ուղեղը, ասում է Փլէտոն ամենայն իրաւամբ:

Ապա ուրեմն՝ հոգեկան ամեն տեսակ հիւանդութիւններ բժշկել նշանակում է նորոգել, բժշկել ուղեղը, որով հիւանդութիւնների առաջն է առնուում:

ԻՔ.

Կան երեխաներ, որոնց վրայ ճնողները նայելուց չեն կշտանում. խելօք, հնազանդ, ազնուաբարոյ, բարեսիրտ, և միանգամայն զուարթ, կայտառ, առողջ, և ոչ թէ տկար ու բացբերան:

Աստուած տայ, որ մեր բոլոր երեխաներն էլ այսպէս լինին, բայց դժբախտաբար այս ցանկութիւնը հազիւ թէ երբ և իցէ կատարուի:

Այսպիսի մի օրինակելի մանուկ մեր ժամանակում աւելի բացառութիւն է կազմում, քան թէ ընդհանուր օրէնք:

Աւելի յաճախ կեանքի մէջ տեսնում ենք կամ փոփոխուող, զրգիռներից տառապող էակ, որ իւր ճնողներին, հսկողներին ու դաստիարակներին յուսահատեցնում է, և կամ թէ, ընդհակառակը, ծոյլ ու թոյլ էակ:

Ի՞նչ անել այսպիսի աղոց:

Հին ու բարի ժամանակների մանկավարժութիւնը մի հզօր միջոց ունէր ինչպէս առաւել

եռանդի, այնպէս էլ չափազանց ծուլութեան դէմ:

Աձող երկոտանու հոգևոր առաջնորդը մի գաւազան ունէր, որով հարուածներ էր շնորհում մարմնի այնպիսի մասերին, որոնք ամենից սակաւապ ունին հոգու և հոգևոր կեանքի հետ:

Այս միջոցը ոչ միայն արդիւնաշատ էր համարուում, այլ և միանգամայն բնական:

Վատ վարքը նկատուում էր իբրև չար կամքի արտայայտութիւն. հաստատ ու անյեղիկ հաւատում էին մանուկի ազատ կամեցողութեան, թէ նա, եթէ ուղէնայ, կարող է այս ու այն անել կամ չանել, վերջապէս ինքն իրան կառավարել:

Ապա ուրեմն՝ մանուկը իւր վատ վարքի համար կատարելապէս պատասխանատու էր համարուում, և իւր պատիժն էլ կրում էր:

Ամեն բան կարգին էր. ամենքն էլ հանդիստ էին, և այն գիտակցութեան, թէ իրանց զործունէութիւնը օրինաւոր է:

Բայց ճշմարիտ է արդեօք:

Իրականութիւնը միշտ այն է ցոյց աալիս, որ կանչվւում էր երեխայի զրգումունքը ուղղակի վարակում է ճնողին:

Ծնողը մի քանի անգամ կանչում է երեխայի վրայ, բայց ապարդիւն է լինում. մանուկը աւելի ևս չարանում և զրգուում է. կամաց-կամաց ճնողն էլ չարանում է, երբեմն աւելի քան թէ երեխան, և անա առաջ է գալիս մի ընդհարում. երկու գազան կռուի են բռնուում, և նրանցից զօրաւորը՝ ճնողը, հարկաւ յաղթանակ է տանում:

Բանականութիւնը համեստութեամբ մի կողմ է քաշուում, և նրա տեղը յուզուած նեարդերն են բռնում:

Այսպէս մի քանի անգամ ծեծ ուտող երեխան, եթէ ապուշ չէ, հետզհետէ այն համոզմունքն է զոյացնում, թէ մեծը իրանից զերազանց է միայն ուժով ու մարմնով:

Այս կերպով չափահաս մարդուն երեխան համարում է չար, վայրենի ու անիրաւ էակ, որին սիրել ու յարգել ամենեւին պէտք չէ:

Եւ մի այսպիսի համոզմունք գուցէ դեռ լաւ է:

Պատահում է և այնպէս, որ զիշեր ու ցերեկ ծեծ ուտող երեխան մշտական աս ու գողով տողորում է, և այս պատճառով էլ նրա խեղճ, մատաղ ուղեղը անկախօրէն դատելու ընդունակութիւնը բոլորովին կորցնում:

Այսպիսի երեխային միշտ մի միտք է ճնշում, այն է՝ ծեծ ուտելու վախը. և մանուկը աճում ու մեծանում է այս երկիւղի ազդեցութեան տակ, որ հարկաւ վնասակար, վտանգաւոր է, և անմիտ ու անմիտ:

Ի՞նչ կլինի այսպիսի խեղճի վերջը. ապաքէն նա իւր հասարակութեան, իւր ազգի, իւր հայրենիքի ապագայ անդամն է լինելու....

Ի՞նչ կգարձնէ նրան պատժի երկիւղը, որ հոգու միջեց բոլոր զգացմունքներն է հանում:

Մեր ժողովրդի վախկոտութեան պատճառներից մէկն էլ այս է:

ԻԳ.

Սովորաբար, ուր որ զիւրազրդիւ երեխաներ կան, այն ճնողներն էլ իսկապէս նահատակներ են. նրանք շուարած չեն իմանում թէ ի՞նչ անեն իրենց սողոյ:

Պէտք է նախ և առաջ այս բանը լաւ միտքը պահել, որ բարկանալը, պատժելը, ծեծելը ոչ մի ազդեցութիւն չունին չարածճի մանուկի վրայ և նրան չեն զսպում:

Երեխայի նեարդերը լարուած են, ամբարուած զրդիոր նրան պաշարում է, և նա պէտք է այդ զրդիոր ծախսէ:

Այս ժամանակամիջոցում մանուկի ուղեղը խաւարի մէջ է ընկղմուած:

Գրեթէ այսպէս է նա լոյս-աշխտոր՝ տեսել, այսպիսի ձիրքեր է ժառանգել իրեն կեանք պարզեողներէ:

Գիտութիւնը, այսինքն բնախօսութիւնն ու հողեբանութիւնը ուսուցանում են, թէ բարկութիւնը նեարդային մի զայրուցք (պրիպադոկ) է, երբ հիւանդը համարեա անգիտակցութեան մէջ է լինում:

Իսկ ընդհանրացած կարծիքը՝ չարութեան յանկարծակի բորբոքումը համարում է չար կամքի արտայայտութիւն:

Այսպիսի տեսութեան համեմատ երեխան եթէ կամենայ կարող է չարանալ. բայց զիտութիւնը

ուսուցանում է, թէ կարող չէ չարանալ, եթէ մինչև իսկ ամենալաւ մտքերով էլ լցուած լինի:

Ո՞րտեղից է ծագում նեարդայնութեան (նեովող) այս բռնկումը:

Նա առաջ է գալիս ուղեղի մէջ ժողովուած նեարդային ոյժի (էներգիայի) լիութիւնից:

Ոյժի այս լիութիւնը, առատութիւնը կարող չէ երկար մնալ նոյն տեղում, նա պէտք է ազատութիւն ստանայ, և յիշուի վաղ կամ ուշ նա արտայայտուում է իբրև կանչ կամ արցունք կամ իբրև անկարգ շարժումներ:

Այսպիսի տղոց մէջ երկու տարբեր բնաւորութիւններ են երևում, որոնք և բոլորովին տարբեր վերաբերմունք են պահանջում:

Առաջին կարգի տղոց բարկութիւնը մի կտոր յարգի բռնկումն է:

Կրակը ամբողջապէս իսկոյն բռնում է, բայց վառումը հազիւ մի քանի բոպէ է տեսում:

Զայբացկոտների այս ախարին պատկանող տղայք յայանի են իրանց յանկարծական փոփոխումներով. քնքուշ ու հեղ աղան անա դառնում է անսանձ խտասիրտ:

Նրանք սրտով ամենեւին չար չեն. շատ շուտով են մոռանում իրանց գաղանային արարմունքը և անախորժութիւն են զգում, երբ մեծերը յիշում են նրանց վարմունքը:

Առողջութեամբ նրանք տկար են լինում, վատ ուժ, աւելի զգացական, փախկտա, դիւրազգեցիկ. այսպիսի տղոց չար անուանել ամենեւին կարելի չէ:

Բոլորովին ուրիշ ախար են ներկայացնում միւս կարգի տղայք, որոնք չարասիրտ են. միշտ քանդող ու կտրատող սիրում են ամեն տեսակ անպիտանութիւններ, որ և առատ ձեռքով աջ ու ձախ սփռում են թէ իրանց քոյրերի ու եղբայրների, և թէ ընկերների ու կենդանիների վրայ, մի խօսքով ամեն բանի վրայ:

Սրանք լինում են պնդակազմ, առողջ ու կարմրաթուշ, շատակեր, չափազանց ժիր, ուժով ու ջղուտ:

Միշտ ճանկատուելով մի տեղ են բարձրանում. փորձանքներից առանձնապէս չեն վախենում, և ոչ էլ ծեծից են շատ վշտանում:

Բնականաբար այսպիսի տարբեր բնաւորութիւններ տարբեր էլ բժշկութիւն են պահանջում:

Առաջին կարգի տղայք հեշտ ու արագ են բժշկուում. այն ինչ երկրորդ կարգիները պահանջում են ուշադիր ու երկարատե բժշկութիւն:

Այս վերջիններն ընդհանրապէս հարբածների սերունդ են լինում:

Այսպիսի երեխաներին մեծ օգուտ է տալիս բանջարակերութիւնը:

Նրանց պէտք է կերակրել բուսական կերակրով, հացով, կաշայով, բանջարներով և առհասարակ կերակրից հեռացնելով այն ամենը, որ դժուարամարս է:

Այսպիսի տղոց շատ օգտակար է դիւրական կեանքը, երկրագործութեամբ, ծառատնկութեամբ,

բանջարատածութեամբ և այլ այսպիսի գործերով պարապելը:

Իժբախտաբար մենք համարեա թէ չունինք երկրագործական ու արհեստագիտական դպրոցներ:

Առաջին տեսակի տղոց վերաբերմամբ մի անգամ ընդունուած կարգը պէտք է ամենայն խըստութեամբ պահպանել. թող նրանք տեղերից ելնեն, սովորեն, զբօսեն, խաղան, ուտեն ամեն օր ճիշտ միևնոյն ժամերին:

Վերջապէս նրանք մարմնամարզութիւն, շարժումներ պէտք է անեն բաց օդում. ընդունեն պաղ, աղային լողարաններ (վաննա) 26—24<sup>0</sup>, ուտեն ձու, կաթ, սպիտակ միս՝ հաւի, հորթի, այն էլ շաբաթը 1—2 անգամ, բակլայ, սպիտակ չոր հաց, հարկաւ փնասակար են ամեն տեսակ ողելից խմիչքներ, խիստ պակասին ու իւրոտ ուտելիքներ:

Երկրորդ մէջ պէտք է չափաւորութիւն ու



ԻԴ.

մենք խօսեցինք երկիւղի մասին. նոյնը աւելի պարզելու և լրացնելու համար մի քանի խօսք էլ աւելացնենք:

Մեր մէջ համարձակութիւն զարթոյնելու և վախը հալածելու համար, ինչպէս ասում է Դեկարտ փիլիսոփան, բաւական չէ որ միայն կամենանք, այլ և ուշադրութեամբ պէտք է քննենք պատճառները, առարկաները և օրինակները, որոնք կհամոզեն մեզ

թէ վտանգը այնքան մեծ չէ, որ աւելի անվտանգաւոր է ինքն իրան պաշտպանելը, քան թէ փախչելը, որ յաղթելու դիտակցութիւնը տալիս է մեզ փառք ու խնդութիւն, այն ինչ փախուսար՝ զըզջումն ու ամօթ:

Սրիութիւնը երեք էական պայմաններից կախումն ունի — բնաւորութիւնից, դաստիարակութիւնից, դատողութիւնից:

Վախը կարելի է երեւակայութեան հիւանդութիւն համարել, որ առաջ է գալիս Ֆիզիքական թուլութիւնից:

Փիզիքապէս տկարացած մարդու մտքը կարող չէ անձնավստան լինել, թէ կյաղթէ, այլ միշտ հաւատում է, թէ կյաղթուի. ապա ուրեմն միշտ համոզուած է լինում, թէ ի զուր է ընդդիմադրութիւնը, մաքառումը:

Պարզ է, որ վախը բժշկելի հիւանդութիւն է և թէ բժշկել կարելի է միաժամանակ ազդելով մարդուս Ֆիզիքականի և միանգամայն բնաւորութեան վրայ:

Թոյլ է մարմնով մէկը — լաւ կերակրի, պընդացրու նրան. նա աւելի զօրաւոր կգառնայ, կզույլիւր ոյժը և միանգամայն կզարթնի նրա մէջ վստահութիւն արգելքներին յաղթելու:

Իմադրելու զազափարը նոյնպէս կհաստատուի նրա մէջ. նա արդէն դիմադրելու միջոց ունի. հարկաւոր ոյժը ունի:

Վախկոտ երեխային որքան կարելի է շատ մարմնամարզութիւն անել պէտք է տալ, այն էլ

ընտրելով առաւելապէս այնպիսի մարդումներ, որոնք բայց օյժից նաև համարձակութիւն են պահանջում:

Երեխան այսպիսի մարդումներին կամաց-կամաց ընտելանալով կհամողուի վերջապէս, թէ իրեն ահաւոր երեցած բաներին կարելի է յաղթել:

Առողջը աւելի քիչ է վախենում, քան թէ թուրկաղմը. քաղցածը կուշտից աւելի վախկոտ է, թէպէտ և ոչ միշտ:

Կան տղայք, որոնք ցերեկները շատ համարձակ են, այն ինչ գիշերները այնքան են վախենում, որ իրանց մօր փէշից չեն բաժանուում:

Լոյսը երեւելի կազդուրիչ միջոց է, հետևաբար նրա պակասութիւնը վնասակար է:

Շատ մարդիկ մութ լուսաւորուած սենեակների մէջ ախուր են լինում, այն ինչ ելեկարական պայծառ լոյսը նրանց զուարթացնում է:

Յայտնի է, որ երբեմն տղայք զարճուրելի երազներ տեսնելով՝ սարսափահար զարթնում են և գոռում-գոչումով տունն են լցնում:

Այսպիսի դէպքերի պատճառ ընդհանրապէս անկանոն անունըն է:

Պէտք չէ պառկելու ժամանակ երեխաների փորը կերակրով կռել, այլ վերջին անգամ նրանց ուտելէքը պէտք է տալ պառկելուց երկու-երեք ժամ առաջ, այն էլ՝ շատ թեթև. այսպէս պիտի անեն նաև մեծահասակները:

Եթէ ստամոքսը ծանրաբեռնուած չէ, երեխան անշուշտ լաւ քուն կլինի:

ԻՆՆ.

Ծուլութեան պատճառն էլ ընդհանրապէս թոյլ տկար կազմուածքն է լինում. կան առողջ ծոյլեր, որոնք աշխատանքից փախչում են, որովհետև աշխատանքը հաճելի չէ նրանց:

Երեխան չի կամենում զբաղուել, որովհետև զբաղմունքը հետաքրքրական չէ, և երբեմն իսկ չափազանց ձանձրալի. բայց հէնց որ զբաղմունքը հետաքրքրական է դառնում, ծուլութիւնն էլ կարծես դանակով է կարւում:

Ընդհանրապէս թոյլ նեարդերով ու վատուած մարդու ուղեղն էլ վատ սնունդ է ստանում:

Ամենահասարակ ու ճնշին շարժման համար, հէնց մատ բարձրացնելու համար, պէտք է թէ կամք, թէ ուշադրութիւն և թէ նեարդային օյժ: Գլխի ուղեղը նրաման է տալիս մկաններին այս կամ այն շարժումն անելու:

Ուղեղի այս հրամանը հաղորդող նեարդերը պէտք է մի որոշ թէև շատ ճնշին աշխատանք բանեցնեն:

Եթէ նրանք այնքան են թուլացած, որ մի այսպիսի աշխատանք անգամ դժուարանում են անել, ո՞րքան ուրեմն ջանք է հարկաւոր լինում աւելի լուրջ, մտաւոր դործունէութեան համար:

Ապա ուրեմն պարզ է, որ ծուլութիւնը մարմնի ընդհանուր անզորութեան հետևանք է:

Զօրացրու հիւանդի օյժերը, ամրապնդիր նրա նեարդերը, և ծուլութիւնը — կվերանայ:

Ծուլութեան աղբիւրը գտնել յաճախ դժուար է լինում:

Այսպիսի դէպքերում կարևոր է բժշկի օգնութիւնը. պէտք չէ իսկոյն երեխայի խօսքերին հաւատայ, թէ առողջ է. նրա թշերը կարող են վարդազոյն էլ լինել, բայց փորձառու հմուտ բժիշկը ծուլութիւնը վերացնելու միջոց կգտնէ:

Բժիշկը ամենայն ճշտութեամբ կբաժանէ երեխայի ժամանակը, այնպէս որ աշխատանքը նրա առօրեայ կեանքի անհրաժեշտ, անբաժան տարրը կլինի:

Ով որ չգիտէ, թէ ինչ է աշխատանքը, այնպիսին չգիտէ նաև թէ հանգստութիւնը ինչ է:

Այսպիսի մի կարգ հաստատելու ամենալաւ միջոցն է՝ աշխատանքի ժամերը ճշտութեամբ որոշել:

Երեխան պէտք է իմանայ, որ այս կամ այն պարապմունքը կսկսի անպատճառ այս ինչ ժամին, բոպէին, և կտէ այսքան ժամանակ:

Սովորութիւնն ինքն ըստ ինքեան մեծ հրաշքներ կարող է գործել. նա կարող է առօրեայ աշխատանքը մինչև իսկ պահանջ դարձնել:

Ամենօրեայ աշխատանքով տաքացած ուղեղը այնպէս է ընտելանում կանոնաւորապէս կրկնուող աշխատանքի, որ ամեն մի խանդարմունք նրան անտանելի կթուի:

Ծանր է ուղեղին, և կատարեալ զրկանք անդործ մնալու այն ժամերին, երբ նա սովորել է որոշ, մշտական ու միաչափ աշխատանք անելու:

Շատ օգտակար կարող են լինել նաև շարժումներն ու մարմնամարզութիւնը. բայց չմոռանա՛նք, որ մարմնամարզութեան ժամանակ էլ ուղեղը նոյնպէս գործում է ինչպէս դաս սովորելիս:

Փիղիքական չափաւոր մարզումները \*) անշուշտ նոյնպէս օգտակար են, եթէ միայն կատարւում են սիրով ու ցանկութեամբ. նրանք կենդանացնում են, արենադարձութիւնը արագացնում, մկանունքները պնդացնում, բայց միշտ պէտք է չափը պահպանել և երեխայի կազմուածքը ի նկատի ունենալ:

Առանձին ամեն մի երեխայի վրայ լաւ ուշք դարձրու, նրա կազմուածքը ուսումնասիրիր, և այնուհետև միայն կարող ես ասել թէ օրուայ մէջ որքան ժամ կարող է նա պարապել կամ խաղալ. չէ՞ որ դու մայր և միանգամայն դաստիարակ ես:

Հմտութեամբ բժշկելը շատ շուտով օգուտ կտայ, և դու կհամոզուիս, որ տղայք ոչ միայն զուարթերես ու վարդազոյն կլինին, այլ և աշխոյժ. շուտ կկարթնեն, շուտով տեղիներիցը կելնեն, կհազնուին. կթողնեն իրանց դանդաղկոտութիւնը, ծուլութիւնն ու ցրուածութիւնը. մի խօսքով կամքի հիւանդութեան նշանները կամաց-կամաց կանհետանան:

ԻՉ.

Ծուլութեան ու թմրածութեան հետ երեխաների վրայ յաճախ նկատելի են նաև հոգեկան ու-

\*) Տես իմ գրքուկը «Մարմնամարզութիւնը»:

րիշ ճնշուած վիճակներ—ձանձրութիւն, տխրութիւն:

Լինում են մանուկներ, որոնք մանուկների չեն նմանում. տխուր, միշտ խորապէս ընկճուած, կարծես մի վշտով հարուածուած լինին:

Նրանց լաւ կերակրում են, դէմքով էլ հիւանդ չեն երևում, նրանց չեն ծաղրում, չեն հալածում, չեն չարչարում, բայց և այնպէս նրանք չեն ազատուում իրանց ճնշող ձանձրութիւնից, որ ոչ մի պատճառ չունի:

Նրանք դեռ ևս ապրել չեն սկսել, և կեանքը արդէն ծանր է նրանց համար:

Նրանք ցոյց են տալիս մի տեսակ անտարբերութիւն. չեն կամենում ոչինչ անել, ոչ խաղալ, ոչ վազվզել, և ոչ անդամ համով բաներ ուտել:

Սյս տխրութիւնը այն աստիճանի կարող է շանել, որ մանչուկը մինչև իսկ երկրաւոր գոյութիւնը ունայնութիւն կհամարի, և կվճռէ, թէ ապրել չարժէ:

Երբեմն այսպիսի վիճակը մշտական ու անընդհատ է դառնում, երբեմն էլ պարբերաբար է երևում:

Սյսպիսի երեխաներից ոմանք մարդկանցից վախճում են, դնում են խուլ ու ամայի տեղեր— դետերի ափ, լեռներ, և այնտեղ նստում են ամբողջ ժամեր մռայլ ու անգործ:

Սյսպէս է լինում ընդհանրապէս ամառը. երեսան ձմեռը առաւօտուանից մինչև երեկոյ զբաղւած է, և հանգստանալու ոչ մի բոպէ չունի. ա-

մառը բոլորովին ազատ է, և հետեաբար նրա հիւանդոտ նեարդերը իսկոյն յուզուում են և ձանձրոյթ են առաջ բերում:

Թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ տղայք առաւել տըխրում են արբունքի հասունութեան ժամանակ, թէ՛ և ընդհանրապէս աշխատում են այդ տխրութիւնը ծածկել:

Նրանք առաւելապէս տխրում են գիշերները, անկողնի մէջ, երբ մենակ են մնում մութ ու խաղաղ բնակարանի մէջ, երբեմն դառնապէս արտասուում են, և իրանց անորոշ ու առանց պատճառի վշտերը լուսնի ու աստղերի առաջ են բաց անում:

Սյս առանձնական ու մասնաւոր դէպքի վեշտը ժամանակի ընթացքում ինքն իրան է փարատում:

Երջանիկ են այն ծնողներն ու տղայքը, որոնց յարաբերութեան մէջ ոչ մի դաղանիք չկայ, որոնց տիրում է անկեղծ բարեկամութիւն ու սէր:

Դժբախտաբար տղոց վստահութիւնը վաստկել շատ դժուար է:

Երեխաների մեղամաղձիկ տխրութիւնը երբեմն հետեանք է լինում թեթեւ, նոր սկսուած ու չարմատացած նեարդային թուլութեան:

Ուշը դարձրու հիւանդ երեխայից վըայ, և բժշկի օգնութեան դիմիր:

Սյս մեղամաղձիկ տխրութիւնը առաջին նշանն է, որով իմանում ենք երեխայի հիւանդ լինելը:

Մէկ էլ տեսնես նա խաղալիկները շարտում է, չի կամենում վազվզել, ոչ մի բանով չի զուարճա-

նում: գլուխը պարանոցի վրայ է կախուում, դէմքը անմիտ արտայայտութիւն է ստանում, աչքերը մթնում են:

Այս երեւոյթները հասկանալի են. երեխայի տխուր արամադրութիւնը նրա ուժերի անկման ուղղակի հետեանք է. այդ տխրութիւնը կտեւէ, մինչև որ ոյժերը վերանորոգուին և իրանց նախկին վիճակը ստանան:

Երեխաների նեարգերը աւելի նուրբ են քան թէ մեծ մարդոցը, և այս պատճառով էլ արտաքին միջավայրի ազդեցութեան աւելի շատ են ենթարկուում:

Արեւն ու տաքութիւնը նրանց զուարթ արամադրութիւն են տալիս, ցուրան ու ամպամած երկինքը նրանց ճնշում են:

Պայծառ, լուսաւոր սենեակի մէջ մանուկը խնդութիւնից կայտառանում է, խաւարի մէջ նա արտասուում է անզիտակցական վախից:

Երեխաների ուրախ արամադրութիւնը ցոյց է տալիս, թէ նրանց ուղեղը չափաւոր կերպով է զրգուած, արիւնը չափաւորապէս է այնտեղ հաւաքուած՝ որեւէ գործօնի, դիցուք լոյսի ու ջերմութեան ազդեցութեան տակ:

Միևնոյն գործօնը աւելի զօրեղ ազդելով՝ պատճառ է դառնում միանգամայն արեան աւելի ու աւելի ուժով ուղեղը ճնշելուն, և այս ազդեցութեան արտայայտութիւնն է կազմում բուռն խնդութիւնը, զրգուած վիճակը, մոլեգնութիւնն ու կատաղութիւնը. օրինակ կարող են լինել հարբածները:

Մի խօսքով այն ամենը, որ մարմնի կենսականութիւնն է զօրացնում, խնդութիւն է պատճառում: Իսկ ինչ որ ընկճում է՝ տխրութիւն. այս ուղեղի մեքենականութեան հիմնական օրէնքն է:

Ի է.

Ուշագրութիւն դարձրու և կիմանաս, որ երեխաները սուտ են ասում ամենաչնչին բաների մէջ անգամ:

Ստախօսութիւնը ամենամեծ չարիքն է աշխարհիս վրայ:

Ի զուր չի պահանջում նշանաւոր մատենագիր ու փիլիսոփայ Տօլստոյը իւր զրուածքներից մէկում միմիայն ճշմարիտ խօսելը չխաբելը. ամենքի երեսին ճշմարտութիւնը ասելը այն ժամանակ միայն երկիրս իսկական դրախտ կդառնայ:

Մի քանի դիտնականներ ամենայն իրաւամբ պնդում են, որ դատաստանական գործերի մէջ պէտք է ամենեւին չնչին նշանակութիւն անգամ տալ երեխաների վկայութեան, որովհետև նրանք զիտակցաբար կամ անզիտակցաբար միշտ սուտ են ասելու:

Երբեմն մանուկները արդարութեան ամենաեռանդուն պաշտպան են հանդիսանում:

Բայց նրանք ընդհանրապէս այսպիսի եռանդ են ցոյց տալիս այն դէպքերում, երբ պէտք է լինում ուրիշի ստախօսութիւնը բռնել:

Օրինակ. մայրը պատմում է մի բան, որին ականատես է եղել և երեխան:

Սա մեծ ուշադրութեամբ լսում է, և առանց ուղղելու և առարկութեան չի փախցնում պատմութեան ամենաչնչին անձտութիւնն անգամ:

Զարմանալին այն է, որ ձշմարտութեան եռանդուն պաշտպան առաւելապէս հանդիսանում են ամենամեծ ստախօսները, որոնց սուտը ամեն մի դէպքում բռնւում է:

Սյսպիսիները կարելի է ասել, կապկութիւն են անում: Նրանց սուտը բռնում են, իրանք էլ աշխատում են ուրիշինք բռնել:

Ստախօսութեան յատկութիւնը յաճախ կապ ունի ուղեղի հիւանդոտ դրութեան հետ:

Նկատուած բան է, որ ներաստենիկները (ներգային հիւանդութիւն ունեցողները), որքան որ նրանց ուղեղը արիւնով աղքատանում է, աւելի ու աւելի հակումն են ցոյց տալիս ամեն բան չափազանցնելով ու այլաբանօրէն ներկայացնելու. նրանք նախապէս չափի զգայնութիւնն են կորցնում, ապա ձշմարտութեան գիտակցութիւնը:

Աւելի ճիշտ խօսելով, այստեղ դեր է խաղում յիշողութեան տկարութիւնը:

Տկարացած ուղեղը որոշ չափով անկարող է լինում ներքին, անձնական մտապատկերները արտաքին իրականութիւնից զանազանելու:

Երբ աստիճանաբար հիւանդը առողջանում է, այն ժամանակ կանոնաւորապէս դատելու ընդունակութիւնն էլ իւր բնական (նոռմալ) դրութիւնն է ստանում:

Մանուկները սուտ են խօսում, ի հարկէ, շատ անգամ պատժելու սպառնալիքից վախեցած. իրենց պարզմտութիւնը խաբում է իրենց. այնպէս են կարծում, թէ սուտ ասելով արդարանում են, իրանց հաւատում են և իրանք էլ հանդիստ են մնում:

Անձնական արժանապատուութեան զաղափարը նրանց մէջ տակաւին կազմակերպուած չէ. ստախօսութեան վատ հետեւանքները գիտակցօրէն կշռելու տակաւին անկարող են:

Մանուկը ապրում է միմիայն ներկայով. և եթէ համոզուած է, որ սուտ ասելով այժմ կարող է ծեծից ազատուել, ուրիշ բան այլ ևս չի պահանջում:

Երբեմն էլ տղայք սուտ են ասում միմիայն խօսելու և մեծերի խօսակցութեան խառնուելու համար:

Ինչ էլ որ միտներն ընկնի, և ինչ որ մեծերի խօսակցութեան է վերաբերում այն էլ ասում են:

Նրանց յայտնած նոր ֆակտը, իրողութիւնը ընդհանուրի ուշադրութիւնն է դրաւում. նրանց հարց ու փորձ են անում: դատողութիւն են տալիս նրանց յայտնածի մասին. և երեխայք մեծապէս մխիթարում են, տեսնելով որ հետաքրքրութիւն են շարժել:

Սյսպէս ուրեմն տեսնում ենք, որ ստախօսութեան բուն հիմքը վատթար դրողմներ են կազմում. և ստախօսութիւնը պէտք է նկատուի իբրև հոգեկան հիւանդութիւն, որից շատ օգտակար է և

պէտք է, որքան կարելի է շուտ, երեսայի հոգին մաքրել:

Բնականաբար բժիշկը շատ բան կարող չէ այստեղ կատարել. միմիայն դաստիարակութիւնը կարող է մանուկին ներշնչել սէր դէպի ճշմարտութիւն, և զղուանք դէպի ստութիւն:

Բժիշկը դաստիարակի համար կարող է պատրաստել միայն հող, այսինքն՝ առողջ վիճակի վերածել երեսայի ուղեղը, եթէ որ և իցէ կերպով խանգարուել է:

Երեսայի վրայ յաջողապէս ազդելու համար դաստիարակը պէտք է դիմէ երկու կարեւոր գործակիցների աջակցութեան, այն է՝ երեսայի հնազանդութեան ու ինքնագործունէութեան:

Ինչպէս չափազանց խստութիւնը, այնպէս էլ աւելորդ քնքշութիւնը հաւասարապէս անտեղի են. մասաղ հոգու զարգացման ու աճեցման նուիրուած առաջնորդը նախ և առաջ պէտք է խոհուն ու արդարամիտ լինի. նա պէտք է իւր ամեն մի քայլը մտածած ու կշռած լինի:

Կարելի է ասել, թէ դաստիարակի հիմնական ու զլխաւոր նպատակներից մէկը պիտի լինի՝ օղէն հնազանդութեան սորվեցնել. իսկ սրան հասնելու համար՝ պէտք է ուսումնասիրել մանուկին, հասկանալ ու իմանալ նրա բնաւորութիւնը, և այս կամ այն փաղաքշանքը տալ այն չափով, որքան որ իսկապէս հարկաւոր է:

Գործնականապէս այս ամենը կատարել շատ

հեշտ չէ, բայց անհրաժեշտ է, եթէ կամենում ենք յաջող արդիւնք ստանալ\*):

Նայեցէք, Անգղիացին իւր որդւոյը համարում է մի սերունդ, որ կոչուած է իւր սոհմը շարունակելու, միայն թէ աւելի ազնուացնելով ու կատարելագործելով:

Անգղիացին մատաղ հասակից զարգացնում է նրանց մէջ անձնայարգութիւն ու ինքնագործունէութեան ոգի:

Նա տալիս է իւր որդուն՝ հասակին համեմատ, կարգալ ձանապարհորդական ու արկածալից դրուածներ, որոնց մէջ մանուկը գտնում է հաստատակամութեան, սովորնութեան, քաջութեան, անձնական նախաձեռնութեան, բնութեան ու մարդոց հետ մաքառելու գեղեցիկ օրինակներ:

Բրիտանական ժողովուրդի կարողութեան ու հզօրութեան գաղանիքը այստեղ է:

Ի՛նչ.

Իսկական առողջ մանկավարժութիւնը, այսինքն՝ մանուկի բնութեան ուսումնասիրութիւնը, ինչ ասել կուզի, որ դժուարին, ձանձրալի ու պատասխանատու գործ է:

Որքան հեշտ է չարածձի մանուկին պառկեցնել ու մի քանի տաք հարուածներ հասցնել՝ բարկութիւնից զրգուած ձեռներով:

\*) Տե՛ս իմ գրքուկը «Սեր նեարդերը»:

Բայց պէտք չէ մոռանալ, որ մանուկը լոյսաշնարճ չէ եկած իւր անձնական ընտրողութեամբ. իւր խառնուածքն ու բնաւորութիւնը իւր յօժար կամքով չէ ընտրած. մի խօսքով նա պատասխանատու չէ շատ անգամ իւր անձնական գոյութեան, իւր անհատականութեան համար:

Ապաքէն շատ կղարմանայինք պարտիպանի վրայ, եթէ նա փայտով ծեծէր իւր ծաղիկները անոր համար միայն, որ նրանք այնպէս չեն բնուած, ինչպէս որ ինքն է կամենում. ճիշտ այսպէս էլ տարօրինակ պիտի թուի ծեծել ու չարչարել երեխային այն պատճառով, որ նրա վարքը, նրա խառնուածքի բնական հետեւանքը մեր ճաշակին, մեր կամեցածին համեմատ չէ. լաւ միջավայր, ծնողների ընտիր օրինակ և զլխաւորապէս համբերութիւն ու ժամանակ — ահա դաստիարակութեան զլխաւոր գործօնները \*):

\*) Ինձ թոյլ եմ տալիս այստեղ խօսքիս ընթացքից մի փոքրիկ խտտորմունք անել:

Լմենքին յայտնի է ապաքէն «Ա ըռժէնէնի գործը», որ անցեալ տարի Վերմանիայում պատահեցաւ, և որը դատապարտեց զրեթէ բոլոր ինտելիգէնդ աշխարհը:

Մի օր Պոզնանում (Վերմանիա) քաղաքային դրպրոցի ուսուցիչներից մէկը պահանջում է, որ աշակերտը կրօնի դասը գերմաներէն պատասխանէ, (լիհացուն գերմանացնելու նպատակով):

Լեհացի մանուկը ամենայն իրաւամբ մերժում է դասը ոչ մայրենի լեզուով պատասխանել:

Լոյն ժամանակ ուսուցիչը սկսում է մանուկին ծեծել և նրա ընկերներին էլ հրամայում է նոյնը անել:

ԱՅԼ ԵՒՍ ԵՐԿՈՒ ԽՕՄԻ

Այնպէս չէ, որքան հետաքրքրական է դիտել, հետազօտել ուսումնասիրել առողջ ու տկար ոգւով ու Ֆիզիքապէս հիւանդ մանուկներ, պէտք է միայն համբերութիւն ու զիտակցական սէր ունենալ դէպի երեխաները:

Այսպիսի դէպքերում զիտութիւնը կամ փոքրի շատէ չափաւորում է մանուկի կենսական ոյժերի յորդութիւնը և նրա մարմինը քիչ շատ նոսմալ դրութեան է վերածում և հաւասարակշռում է երկնային հիւրը — հողին. և կամ՝ երբ մարմնական ոյժերի հաւասարակշռութիւնը ընկել է, զօրացնում է մարմինը, և այն վիճակին է հասցնում, որ անհրաժեշտ է բարեըջանիկ կեանքի համար:

Այսպէս զիտութիւնը տալիս է դաստիարակի ձեռքը առողջ, մարմնով ու հոգով հաւասարա-

ճեղք օգուտ չի տալիս. բայց մանուկ հերոսը տուն զալով ծանրապէս հիւանդանում է. նա սկսում է փսիսել նրա աղիքները բորբոքում են և խեղճ տղան երեք օր սաստիկ տանջուելուց յետոյ մեռնում է:

Լոյս սև բիծը, այս անարգ գործը կարելի չէ ամենեւին սրբել Վերմանիայի վրայից, ուր դժբախտաբար դեռ տիրում են, այն էլ քսաներորդ դարում, բարբարոսութիւն, խստութիւն ու կոպտութիւն:

Մի նուաճուած ու հպատակ ժողովուրդ կարծես թէ կարող չէ լաւ քաղաքացի ու հպատակ լինել եթէ իւր մայրենի լեզուն և նրան հետ կապուած հայրենի կրօնը պահպանէ, ինչպէս իրաւամբ նկատում է յայտնի հրապարակախօս իշխան Ուլտոմսկին իւր լրագրի մէջ:

կշռուած էակ, և այնուհետև մնում է, որ դաստիարակը այդ մատաղաշ կենդանի նիւթը տանի առողջ աճեցման, զարգացման ու կատարելագործութեան ճանապարհով:

Հապա ի՞նչ անեն խեղճերը. խաւար ու թըշւառ ամբօխը:

Արանք էլ նոյնպէս աճում են, սերունդ են առաջ բերում, և դուցէ ուրիշ ոչ մի շրջանի մէջ այնքան կարևոր չեն գիտութեան, բժշկի խորհուրդները, ինչպէս այստեղ խեղճերը կարող չեն մինչև իսկ իրենց վատուժ, նիհար զաւակներին կերակրել, ուր մնաց թէ դաստիարակել:

Այստեղ, և ոչ մի այլ տեղ, կարելի է գտնել անչափ շատ նեարդային հիւանդներ, թոյլ արարածներ, որոնք իրանց վըայ կրում են իրանց ծնողների կամայ և ախամայ մեղքերի որոշ հետքերը, նրանց վատ սննդառութեան, արբեցողութեան, հիւանդութիւնների նշանները:

Լեզուն իւր խառնուածքն ունի. կարելի չէ բնութեան օրէնքների դէմ մեղանչել, այդպէս է ստեղծուած մարդս. այդ է ասում գիտութիւնը:

Ի՞նչ շահեցաւ »Ա ըստէնէնի գործը«, այս միայն, որ Պողանում, Վալիցիայում, Լեհաստանում սկսան գերմանական ապրանքներ չգնել. լեհացիները որոշեցին՝ ամենևին գերմանիայից ապրանքներ չստանալ այլ միմիայն ուրիշ երկրներից:

Լ՛յս էլ գէթ մի բարոյական հարուած էր Վերմանիային:

Իզուր չի ասել նշանաւոր գիտնական Հենինգը («Մարուման մէջ կգտնես բո իրաւունքը»):

Այն ինչ այս ընկած երեխաներն են, որ ապագային ժողովուրդ պիտի կազմեն:

Հասարակութեան շահերն հասկանալու ընդունակ ու նիւթական կարողութեան տէր մարդիկ պարտական են օղնութեան ձեռք մեկնելու այս թշուառ, խաւար ամբօխին:

Հասարակական բարեգործութիւնը մեծամեծ օգուտներ կարող է տալ այսպիսի դէպքում:

Կարևոր ու անհրաժեշտ է ամեն տեսակ ախտերի ու հիւանդութիւնների և մանաւանդ անկման առաջն անել:

Անտարակոյս գիտութեան լոյսի հետզհետէ տարածուելովը այս աշխատանքը մեծապէս կհնշտանայ. բայց ո՞ւր են դպրոցները \*):

Թող անէ ամեն մարդ՝ ինչ որ կարող է. եսաժողութեան մէջ չկայ ոչ երջանկութիւն և ոչ էլ սէր, այլ անողոք ու վաղաժամ այլասերումն ու մահ:

\*) Ի դէպ ասենք, որ այժմ Պարսկաստանի հայաբնակ քաղաքներում և գիւղերում, ամեն մարդ կարող է իւր ուղած տեղում մի դպրոց բանալ իւր անունով՝ ու շարկելով տարեկան գոնէ երեք հարիւր ռուբլի: Լ՛յդ գումարով կարելի է դաստիարակել—կրթել 40—50 աղջիկներ և տղաներ: Վստաւր պէտք է շարունակել ամբողջիկները: Ինչպէս գիտենք, ծրագրուած է նաքիջը հինգ—վեց տարի: Ինչպէս գիտենք, ծրագրուած է շուտով կհաստատուի Պարսկաստանում կրթական կենդրոնական վարչութիւն. առ այժմ հաստատուած կայ ժամանակաւոր կրթական վարչութիւն, որ աշխատում է դպրոցներ բանալ:

16

Այս գործունէութեան նպատակը ժողովուրդի առողջութիւնը պիտի լինի, մեր անձնական առողջութիւնը, որով միայն ուրիշ բարեքնքերի կարելի է հասնել:

Ապրելու համար պէտք է խելացի կերպով աշխատել, հաւատար, յուսալ և սիրել. այս է մեզ ուսուցանում անմահ գիտութիւնը:

Ո՛վ մայրեր, աճող սերնդի դաստիարակութիւնը աւելի կանոնաւորելու համար՝ շաբաթուայ մէջ մի-երկու անգամ հաւաքուեցէք միասին, (շքրջաններ) կազմեցէք, կարգացէք, խորհեցէք, խօսեցէք, և դուք ճշմարիտ արդիւնքի կհասնէք:

Իուք մարդ էք, մերկ ծնուած, մտածեցէք հազուտի մասին. ծնուած էք տկար, աշխատեցէք զօրեղ լինել. ծնուած էք փոքր, ջանացէք մեծ լինել. աշխարհիս սիւնը՝ մեծերն ու զօրաւորներն են:

Տգիտութեան ու սարկութեան ժամանակներում թշուառը սովորաբար շրջում էր ոսկեզօծ ամրոյնների պատուհանների տակ՝ կանչելով հաց, հաց տուէք:

Այս մուրացկանութիւնը թէ՛ խնդրողին և թէ՛ ողորմողին միանգամայն ստորացնում էր:

Բայց այս լուսաւորութեան ու ազատութեան ժամանակներում, քաղաքակիրթ աշխարհներում՝ թշուառը խնդրում է աշխատանք, բան ու գործ:

Այս խնդրուածքը ոչ մէկին չի ստորացնում, որովհետև մարդկային նուիրական իրաւունքներից մէկի արտայայտութիւնն է, որովհետև մեր բնութեան անկապտելի պահանջներից մէկն է:

Մարդկային ընկերութիւնը մարդկային ընտանիք կզառնայ, երբ իւրաքանչիւր անհատ աշխատաւոր կլինի, երբ մարդուս մեծութիւնն ու փառքը հիմնուած կլինին միմիայն աշխատանքի վրայ:

Ով որ այսպիսի պարագաների ժամանակ խեղճ ծնուի, այնպիսին իւր խեղճութեան մէջ մղումն կստանայ աշխատելու:

Ով որ հարուստ ծնուի, այնպիսին կձգտի իւր հասարակական շրջանն ընդլայնելու. մէկը դաշտում, իսկ միւսը գրադարանում. մէկը արհեստանոցի մէջ, իսկ միւսը անտառում. մէկը գրչով, իսկ միւսը ծովի վրայ. բայց ամենքն պէտք է աշխատեն ու գործեն:

Ձեն լինիլ անաշխատ հաց ուտողներ, չեն լինիլ և աղքատներ:

Ահա այն իդէալը, որին մարդկութիւնը ձգտում է հասնել անընդհատ մաքառումներով, բայց հաստատամտութեամբ:

Իւրաքանչիւր ազնիւ մարդու պարտքն է՝ իւրօրօքանն նպաստել այս իդէալին հասնելու:

Քրիստափոր Կոլումբոսը չվհատեցաւ, այլ կռուեցաւ ու յաղթեց, որի շնորհիւ հինգ դար սրանից առաջ՝ Սպանիան ստացաւ մի անբաւ հարստութիւն, մի նոր աշխարհ — Ամերիկան:

Ամերիկան այժմ ազատ երկիր է, ուր չի մոռացւում երբեք հին իմաստուն առածը. տիրեցէք, բայց թոյլ մի տաք, որ հարստութիւնը ձեզ տիրէ: Փողը՝ երջանկութեան հասնելու միջոց է, այլ ոչ թէ ինքնին երջանկութիւն:

սգ  
|||

Երջանկութիւնը՝ մեր սեփական ձեռքի գործն է, մեր ձեռքն է մեր բախտի գաղանիքը:

Պէտք է միայն նորահաս սերունդին ճշմարիտ գաստիարակութիւն տալ, թէ աղջեկներին և թէ աղաներին հաւատարմութիւն տալ:



Վ Ե Ր Ձ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵՍԵՆՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՍԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵԻԵԱԼ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻԻՆՆԵՐԸ.

- 1. Բեորնսօն—կաղմեց Ե. Թոփչեան . . . . . 10 կ.
- 2. Մաճմեղ . . . . . 7 կ.
- 3. Մեարոյ՝ Մաշտոց—կաղմեց Ե. Թ. . . . . 5 կ.
- 4. Սահակ՝ Պարթև . . . . . 5 կ.
- 5. Հառւպտման . . . . . 15 կ.

Հաւտով լոյս են տեսնելու՝

- 1. Իբսէն.
- 2. Վօզօլ.
- 3. Բլիշան.

Պատրաստուած են նոր կենսագրութիւններ:

- ՊԻՄՆԷ՝ 1) *Ս.-Սետերբուրգ*: Ивану Арамянцъ, Ямская 38.
- 2) *Տիֆլիս*: С. Абрамяну, Сергіевская ул., контора Арамянцъ.
- 3) *Բաքու*: Товарищество «Прометеусъ», Красноводская ул., д. Амировыхъ.



ՀԵՂԻՆԱԿԻ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏԱՍԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը (սպառ.)	5 կ.
2. Ս արակիչ Տիւանդութիւններ (սպառ.)	5 »
3. Ինչ է սիֆիլիսը (սպառ.)	5 »
4. Առողջապահական զբոյցներ (սպառ.)	5 »
5. Ինչ է ժուժկալութիւնը (սպառ.)	5 »
6. Ինչ է անառակութիւնը (սպառ.)	5 »
7. Ս Եներական ատեր. (սպառ.)	5 »
8. Բշակեքտի առողջապահութիւն (Թարգմ. սպառ.)	2 »
9. Սեր նեարդերը (սպառ.)	10 »
10. Սիֆիլիս (բարեփոխում. սպառ.)	10 »
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ (սպառ.)	10 »
12. Գեղձատ. (զօլտուխա) (սպառ.)	10 »
13. Ո՛վ է յանցաւորը.	15 »
14. Կարիք և բարեգործութիւն	15 »
15. Երանգականութիւն և դաստիարակութիւն.	15 »
16. Մանկավարժական համառօտ զբոյցներ.	15 »
17. Մարմնամարդութիւն (25 պատկերներով).	20 »
18. Առողջապահական նուէր նորատի կանանց.	20 »
19. Կինը և տղամարդը.	15 »
20. Ս իրարուժական հիւանդութիւն և օպերացիա	5 »
21. Ինչ է կաշու հիւանդութիւնը	15 »
22. Երիտասարդութիւն և ծերութիւն.	15 »
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին	20 »

Գ Ի Ն Ն Է 20 Կ Ո Պ.

Հետեւալ վեց գրքերը որոնցից առաջին հինգ մամուլի տակից արդէն դուրս են եկել տպուելուց յետո կվաճառուին Լիւսալցիայում հիմնուելիք հիւանդանոց օգտին:

1. Կինը և տղամարդը.	15 կ.
2. Ս իրարուժական հիւանդութիւն և օպերացիա	5 »
3. Ինչ է կաշու հիւանդութիւնը	15 »
4. Երիտասարդութիւն և ծերութիւն.	15 »
5. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին	20 »
6. Ուղեղի սիֆիլիսը	15 »



«Ազգային գրադարան»



NL0145657

3901